

Արտաշես Քալանթարյան

ՀԱՏՎՈՂ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ վետերան

ԵՐՎԱՆԴ ԶԱՆԱԶԱՆՅԱՆ թաղման հանձնաժողովի նախագահ

ԱՐՄԵՆ ԽՈՐԵՆՅԱՆ հանձնաժողովի անդամ

ԾՈՎԻԿ նրա կինը

ՍԵՂՆԱԿՅԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ թաղման հանձնաժողովի անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ Հայկ Մկրտչյանի բարեկամուհի

ՎԱՀՐԱՄ Հայկ Մկրտչյանի բարեկամ

1-ԻՆ ԾԵՆՈՒՆԻ

ՕՍՄԱՆ ԲԵԿ ոստիկանապետ

(Բեմադրությանը մասնակցում են հարևաններ, հարևանուհիներ, հուղարկավորության մասնակիցներ)

(Գործողության վայրը Երևանը: Ժամանակը՝ մեր օրերը)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

(Ընդարձակ սենյակ: Կահավորանքը չափազանց համեստ է և ծածկված է սպիտակ սավաններով: Սավանով է ծածկված նաև հնառճ մենահայելին: Պատերի երկայնքով դասավորված են տարբեր ոճի աթոռներ: Պատերին ինչ-որ նկարներ կան, ավելի շուտ խոշորացված լուսանկարներ: Ասես երկրի պատմությունից... Հայկական բնանկարներ: Անկյուններից մեկում Անդրանիկի գիպսե կիսանդրին է:

Սենյակից երեք դուռ է բացվում: Ձախ կողմում մուտքի դուռն է, դիմացինը ամբողջ գործողության ընթացքում բաց է: Աջ կողմից տանում է մի ուրիշ սենյակ:

Սենյակում աթոռներին տարբեր դիրքերով ձերուներն ու պառավներ են նստած: Խոսում են շշուկով: Ինչ-որ մարդիկ են հայտնվում անադմուկ, ծաղիկները ձեռքերին, մտնում այն սենյակը, որի դուռը միշտ բաց է: Դուրս են գալիս ու անհետանում:

Բաց դռնից հայտնվում է մի ձերունի... դողդոջ քայլերով մոտենում է աթոռին, նստում...)

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - (Հարևանին) Շատ է փոխվել...

2-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Ի՞նչ...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Ասում եմ շատ է փոխվել...

2-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Դու նույնն ե՞ս մնացել:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Է՛լի, է՛լի, իբրև թե ինչ տարավ աշխարհից...

2-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Ամբողջ կյանքում մենակ տանելու մասին ես մտածել:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Ի՞նչ...

(Երկրորդ ձերունին թափ է տալիս ձեռքը)

1-ԻՆ ՊԱՌԱՎ - Համարյա քսան տարի մի շենքում էինք ապրում, բայց առաջին անգամ է, որ մտնում եմ էս տունը:

2 -ԲԴ ՊԱՌԱՎ - Աղքատ տուն է: Ո՞վ էր, ի՞նչ էր:

1-ԻՆ ՊԱՌԱՎ - Ես ի՞նչ իմանամ, մարդ էր, էլի... Ասում էին հին բոլշևիկ է:

3-ԲԴ ԾԵՆՈՒՆԻ - Բա էդ մարդը ոչ մի հարազատ չունի՞ ... վրան լաց լինող չկա՞ :

4-ԲԴ ԾԵՆՈՒՆԻ - Ոչ մեկը չունեք:

3-ԲԴ ԾԵՆՈՒՆԻ - Ուրեմն լրիվ է մեռել: Հա, հա: Հին պատմություն է: Մի տեղ թաղում է լինում, մի մարդ մոտենում է հարցնում, թե մեռնողն ով է: Ասում են տարիքով մարդ է: Լրի՞վ է մեռել, թե մի մասը - հարցնում է ծերունին: Էս ու էն կողմից վրա են տալիս՝ հիմար ես, ինչ ես, ասում են, մարդու մի մասը մեռնելը ո՞րն է: Մի մասն էն է, ասում է անծանոթը, եթե նա իրենից հետո զավակներ է թողել, աշխարհին: Իսկ եթե չէ՝ ուրեմն լրիվ է մեռել:

4-ԲԴ ԾԵՆՈՒՆԻ - Սխալ է:

3-ԲԴ ԾԵՆՈՒՆԻ - Գրքում եմ կարդացել:

4-ԲԴ ԾԵՆՈՒՆԻ - Որտեղ ուզում ես կարդա: Սխալ է: Մարդս հո մենակ զավակներով չի մնում... Այլև նրանով, թե ինչ է թողել աշխարհին: Ու էդպես ապրում են նաև շենք ստեղծողը, ծառ տնկողը, գիրք գրողը:

3-ԲԴ ԾԵՆՈՒՆԻ - Հիմի ինքը դրանցից ո՞րն էր

4-ԲԴ ԾԵՆՈՒՆԻ - Բոլորը... Որ չգիտես մի խոսի... Ու ընդհանրապես... ընդհանրապես... որ չգիտեք, մի խոսեք, հա... շատ եմ խնդրում:

3 - ԲԴ ՊԱՌԱՎ - Շատը գիտես ինչի եմ եկել... Որ տեսնեմ, թե ինչ տեսակ է լինում կառավարական թաղումը... Լսելը, շատ եմ լսել, բայց ոչ մի անգամ աչքովս չեմ տեսել:

4 -ԲԴ ՊԱՌԱՎ - Իսկ ինչի՞ են կառավարական թաղում... մե՞ծ մարդ էր:

3-ԲԴ ՊԱՌԱՎ - Ասում են՝ շատ մեծ...

4-ԲԴ ՊԱՌԱՎ - Կահույքից չի երևում... Իմ տղան մսի կոմբինատում սովորական պահակ է, երեք հատ ստենկա ունի...

3 - ԲԴ ՊԱՌԱՎ - Չէ, մտածում եմ, թե տեսնես մեռելահաց կտան... Ախր տելեվիզորով մի գլուխ ասում են, թե մեռելահացը հետամնացություն է: Հիմի տեսնես որ հացն իրենք են տալու, ի՞նչ են անելու... Ախր առանց խաշլամայի ո՞նց կլինի:

4 - ԲԴ ՊԱՌԱՎ- Բա գինին, գինին...

3 -ԲԴ ՊԱՌԱՎ - Գինին մոռացեք...

4-ԲԴ ՊԱՌԱՎ - Ես կմոռանամ, դու նրանց ասա, նրանց... *(ծերունիներին է ցույց տալիս)* Եկել, շարվել են, հերթ են պահում... գլուխները տմբտմբացնելով...

(Բաց դռնից հայտնվում է հարևան Վաղոն)

ՎԱՂՈ - Հա, նա մեծ մարդ էր, մեծ ... Ամեն առավոտ ինձ տեսնում էր, թե չէ, ասում էր «Բարի լույս, Վաղո» ... Բարի լույս, ասում էր, Վաղո...

(Դուրս է գնում)

3 - ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Հիմի իբր ավելի լավ չէ՞ր պետության փոխարեն մի տղա ունենար: Պետության թաղածն ի՞նչ պետք է լինի:

4 - ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Եղա՞վ: Դրանից էլ մեծ պատի՞վ:

3 - ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Պատվի մասին չեմ ասում, է, դագաղի մասին եմ ասում... Մի տղա որ ունենար, դագաղը կաղնի փայտից կլիներ... իսկ հիմա իջիր տես, իջիր տես, ինչ են դրել դռան մոտ...

4 - ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Իսկ դու տղա ունե՞ս...

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Երկուսը... Բայց չէ՞ որ օրենքով ինձ էլ է կառավարական թաղում հասնում... Ինչի՞ պիտի տղերքս ծախս անեն...

2-ԲԴ ՊԱՌԱՎ - Արդեն ամառվա կեսն է, բայց կանաչին էլի թանկ ու կրակ... Հարյուր գրամ խոտը մի ռուբլի է, էսպես ապրե՞լ կլինի...

1-ԻՆ ՊԱՌԱՎ - Հա, հա, էս էլ էս տարի խաղողի թուփ չփակեցի... *(վեր է թռչում)* Վայ, տոլմեն կրակին եմ թողել ու եկել... վառվեց...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Բա զիջերն ո՞վ է մոտը մնալու, շոգ է, կդիմանա՞...

2-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Պատուհանը բաց կթողնեն, էլի... Տեսնես տանը կատու կա՞:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Մեր տանը կա, բերե՞մ... մկների համար էս ասո՞ւմ... ի՞նչ, չլսեցի...

(2-րդ ծերունին թափ է տալիս ձեռքը)

(Հանկարծ կրնկի վրա բացվում է մուտքի դուռը: Ներս են մտնում սև թևակապերով երկու երիտասարդ՝ կանգնում դռան երկու կողմում: Նրանք կարճաթև սպիտակ վերնաշապիկներով են և սև փողկապներով: Հայտնվում է արարողապետը՝ Երվանդ Ջանազանյանը՝ ճաղատացող գլխով, սև կոստյումով, պիջակի աջ թևքին սպիտակ թևկապ:)

ԵՐՎԱՆԻ - Ներս բերել ծաղկեպսակը:

(Նրա թիկունքից հայտնվում են դարձյալ երկու մարդ՝ սպիտակ կարճաթև վերնաշապիկներով և սև թևակապներով՝ ծաղկեպսակը բռնած):

Ծաղկեպսակը դնել հանգուցյալի ոտքերի մոտ և պատվո պահակ կանգնել:

(Բոլորը մտնում են բաց դռնով սենյակը: Երվանդ Ջանազանյանը ձեռքերը թիկունքին նայում է շուրջը նստած լուծ մարդկանց, նայում է սևեռուն ու ասես զարմանքով)

Դուք ազատ եք:

(Բոլորը դուրս են գալիս: Միայն 1-ին ծերունին ամեն կերպ ուզում է նրա ուշադրությունը գրավել)

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Բարև ձեզ, ընկեր Ջանազանյան... Դուք ինձ հիշո՞ւմ եք... հանդիսավոր նիստում...

ԵՐՎԱՆԴ - Այո, այո, դուք ազատ եք... Ինչպես տեսնում եք՝ միջոցառում ունենք:

(Ծերունին ետ-ետ դուրս է գալիս)

Ի դեպ, այստեղ հեռախոս կա՞:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - *(Ուրախ առաջ է գալիս)* Կա: Բերե՞մ:

ԵՐՎԱՆԴ - Բարի եղեք:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Լսում եմ

(Շրջվում է, մանրիկ քայլերով վազելով կողքի սենյակն է մտնում, վերադառնում հեռախոսի սարքով: Խրոցը տեղն է դնում և թեքվելով լսափողը մեկնում Ջանազանյանին)

Խնդրեմ...

ԵՐՎԱՆԴ - *(Յուրայիններին, հիացած)* Տեսնում եք ինչ դպրոց է: Սովորեք: Ապրես, ծերուկ:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - *(Շրջվում է)* ծառայում եմ...

ԵՐՎԱՆԴ - Լավ ես անում: Միայն թե կամաց: Մոտերքում եղիր:

(Նստում է աթոռին: Ծերունին մի աթոռ էլ նրա դիմացն է դնում և հետ քաշվում: Երվանդը հավաքում է համարը: Ջրադված է)

Այս ի՞նչ են անում: Այսպիսի մի օր կարելի՞ է հեռախոսը զբաղեցնել: Սեղրակյան, Սեղրակյան, ամեն ինչ արված է, թե սովորականի պես հավելագրումներ ես թույլ տվել...

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Ամեն ինչ արված է, շեֆ:

ԵՐՎԱՆԴ - Դե տես հա, կաշիդ կքերթեմ... *(հեռախոսի մեջ)* քեզ չէր վերաբերում, Ղազարյան, բայց ըստ երևույթին քեզ էլ կհասնի: Այ տղա, էս ի՞նչ թառ քյամանչա է ... Լսիր, թառ

քյամանչայով «Ինտերնացիոնալ» են կատարում: Եթե թաղման հանձնաժողովի նախագահը ես եմ... մնացածը քեզ պարզ չի... Ուրեմն գրիր մոտոյ. Քաղսովետի փողային նվագախումբը... Գրեցի ը: Կվարտետ: Երկու հատ: Սիմֆոնիկը... Որտե՞ղ... Հա, ճիշտ է, ջնջիր... Երգչախումբը... Հետաքրքիր մարդ ես, թող կողքի քարերի ետևից երգեն.. Չգիտեմ... Որոշում կա... Պրոտոկոլ գոյություն ունի... Եվ տես որ «Լարի սմբլա, հա, հա, հան» չերգեն: Մի ջերմ, այսպես ասած հայրենասիրական գործ... *(անջատում է)* Սեդրակյա՞ն...

ՍԵՂԻՐԱԿՅԱՆ - Լսում եմ, շեֆ:

ԵՐՎԱՆԴ - *(Ինչ-որ ցուցակ է նայում)* Պիոներները...

ՍԵՂԻՐԱԿՅԱՆ - Պատրաստ եմ...

ԵՐՎԱՆԴ - Կաշիդ կքերթեմ: Ղարիբյա՞ն:

ՂԱՐԻԲՅԱՆ - Համակ ուշադրություն եմ...

ԵՐՎԱՆԴ - Ուշադիր պիտի այնտեղ լինեիր: Այ տղա, ես քեզ ցուցակ եմ տվել, որ տանես ջնջես ու ե՞տ քերես:

ՂԱՐԻԲՅԱՆ - Սրտիցս արյուն էր կաթում, ընկեր Զանազանյան:

ԵՐՎԱՆԴ - Չբացատրեցի՞ր, թե ում համար է:

ՂԱՐԻԲՅԱՆ - Չճանաչեց:

1-ԻՆ ԾԵՆՈՒՆԻ - Գնա՞մ դասավորեմ գամ...

ԵՐՎԱՆԴ - Ի՞նչը...

1-ԻՆ ԾԵՆՈՒՆԻ - Ինչ ուզում եք:

ԵՐՎԱՆԴ - Մոտերքում եղիր... Ղարիբյան, ուրեմն ես ձեզ տեղ պիտի ուղարկեմ երեխաների նման ու վազեմ ձեր ետևի՞ց:

ՂԱՐԻԲՅԱՆ - Ամոթից գետինն եմ մտնում...

ԵՐՎԱՆԴ - Չճանաչեց... նրանք ո՞ւմ են ճանաչում... նրանք մենակ ՕԲԽՍՍ են ճանաչում: Չէի՞ր կարող բացատրել...

ՂԱՐԻԲՅԱՆ - Ուզում եք մորթեք, բայց ես էլ չէի ճանաչում...

ԵՐՎԱՆԴ - Դո՞ւ... է դ մեծ մարդո՞ւն... Ուրեմն երբեք չէի՞ր տեսել:

ՂԱՐԻԲՅԱՆ - Չէ...

ԵՐՎԱՆԴ - Իսկ դո՞ւ, Խորենյան:

ԱՐՄԵՆ - Քիչ առաջ նայեցի... Չհավատացի աչքերիս... Ես նրան շատ եմ տեսել, ընկեր
Զանազանյան...

ԵՐՎԱՆԴ - Որտե՞ղ...

ԱՐՄԵՆ - Ձեր ընդունարանում, ընկեր Զանազանյան... Մի ամիս գալիս-գնում էր, ուզում էր
խոսել ձեզ հետ:

ԵՐՎԱՆԴ - Հըմ... Անհնարին է ... *(կտրուկ շարժումով ներս է մտնում)*

ՂԱՐԻԲՅԱՆ - Հացդ կերար, Արմեն...

ԱՐՄԵՆ - Բայց ես իսկապես շատ էի տեսել...

ՂԱՐԻԲՅԱՆ - Ուրեմն ես չէի տեսել, հա՞... Գիտե՞ս քանի անգամ հենց ինձ մոտ է եկել: Ինչ
արեցի, Զանազանյանը չընդունեց:

(Հայտնվում է Երվանդը)

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - Ինչպիսի համեստություն... Ավելորդ, ես կասեի... Եթե իմանայի, որ այս
մակարդակով են նրան թաղելու... Որ անձամբ ինքը... Ցուցակն ինձ տուր, Ղարիբյան:
(Հավաքում է համարը) Գարեգին Միսակի չ... Եղա՞վ... Խնայողություն...
Հասկացանք... Բայց դեպքեր կան, որ խնայել չի կարելի... Չի կարելի, սիրելի
բարեկամ... Եթե ես գրում եմ՝ տավարի միս 20 կիլոգրամ, ուրեմն գիտեմ, թե ինչ եմ
գրում: Եթե գրում եմ՝ թառափաձուկ... դե էդ թառափաձուկն էլ օսետրինան է, էլի... Բա
էլ ո՞ր օրվա համար եք պահում: Մարդն իր կյանքն է նվիրել մեզ, մենք երկու կիլո
օսետրինան ենք ափսոսում: Ամոթ չէ՞, շվեյցարական պանիրն էլ ջնջել ես, տեղը
չանախ ես գրել: Եղա՞վ: Քո երեխաները չանախ են ուտում: Նա ամբողջ կյանքում
պայքարել է, նա ամբողջ կյանքում պայքարել է, որ քո երեխաները շվեյցարական
պանիր ուտեն, իսկ դու... Ով է, ով է, վաղուց պիտի իմանայիր, թե ով է: Կյանքումդ
ճաշացուցակից բացի ուրիշ բան կարդացած կա՞ս: Ի դեպ, սխալ չէր լինի, եթե դու էլ
երևայիր... Ինքն էլ է լինելու... Բհարկե:

Ուրեմն ցուցակը ետ եմ ուղարկում... եղավ... *(Ցած է դնում լսափողը)* Ղարիբյան...

ՂԱՐԻԲՅԱՆ - Համակ ուշադրություն եմ:

ԵՐՎԱՆԴ - Վերցրու: Եթե ես եմ աշխատելու քո փոխարեն, Ղարիբյան... ուրեմն քո հաստիքի
կարիքն այսուհետ երևի չզգացվի... պա՞րզ է ... մտածիր, եթե կարող ես...

ՂԱՐԻԲՅԱՆ - Ամոթից գետինն եմ մտնում, ընկեր Զանազանյան

(Հեռանում է)

ԵՐՎԱՆԴ - Սեդրակյան:

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Լսում եմ, շեֆ:

ԵՐՎԱՆԴ - Նկարը:

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Պատրաստ է :

ԵՐՎԱՆԴ - Իմ խոսքը...

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Պատրաստ է:

(Հանում է պայուսակից)

ԵՐՎԱՆԴ - Մի բանվորի գտեք, որ խոսի...

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Քիմիագործ Հովսեփյանի խոսքը պատրաստ է:

ԵՐՎԱՆԴ - Հովսեփյան^ո... ամեն տեղ նա^ո է խոսելու, ինչ է ... բա է՞րբ է աշխատում... մեկ ուրիշի տվեք...

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Համարեք կատարված:

ԵՐՎԱՆԴ - Բարձիկ գտեք շքանշանների համար...

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Ոչ մի շքանշան չունի, ընկեր Ձանագանյան...

ԵՐՎԱՆԴ - Ինչպե՞ս թե.. Անհնարին է ... Այդքան ապրել է ... Ինչպե՞ս կարող է շքանշան չունենալ...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Ես ունեմ... բերե՞մ...

ԵՐՎԱՆԴ - Դու... դու կունենաս... քո հերթն էլ կհասնի, սիրելի բարեկամ: Այնժամ կբերեք:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Չէ, ասում եմ, թե պետք է ձևի համար... Որ խոսակցություն չլինի... մինչև գերեզման...

ԵՐՎԱՆԴ - Դու մոտերքում եղիր *(Հեռախոսով)* Բարև , Յուլյա Լևոնիչ, Ձանագանյանն է ... Ուղեգրերի հարցը ի՞նչ եղավ... Դե տես... Վաղը թաղման արի... փառահեղ թաղում է լինելու... Հին սերնդից է... Հա, փաստորեն վերջին մոհիկաններից մեկը... Հանձնաժողովի նախագահը ես եմ... այսօրվա թերթերում անունս կա, չե՞ս կարդացել... Հիրավի... եկ, եկ, քեզ համար եմ ասում, ինքն էլ է լինելու, ետևից կքայլես

ու կլուծես հարցերդ... Ուղեգրերը կլինե՞ն, դե կեցցես, կեցցես... *(Անջատում է)*
 Հոգնեցի: Գոնե մի բաժակ սուրճ տվող լիներ:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - *(Մեկնում է բաժակը)* Համեցեք, ընկեր Ջանազանյան:

ԵՐՎԱՆԴ - Սո՞ւրճ: Որտեղի՞ց, սիրելի բարեկամ...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Մոտս միշտ թերմոս եմ պահում...

ԵՐՎԱՆԴ - *(Յուրայիններին)* Սովորեք... *(1-ին ձեռունուն)* Համոզված եմ, որ
 դեկավարությունը միշտ էլ զգացել է քո կարիքը... Դու աչքի ընկնող գործիչ ես...
 Ինչպե՞ս է, որ իմ աչքին չես ընկել...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Ես ուրիշ շրջանում եմ ապրում... բայց եթե ուզում եք...

ԵՐՎԱՆԴ - Կգաս ինձ մոտ, կխոսենք... Հանգուցյալին ճանաչո՞ւմ էիր...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Էս հինգ մատիս պես...

ԵՐՎԱՆԴ - Իրո՞ք մեծ մարդ էր:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Ես նրա մասին գրավոր կարծիք ունեմ... Կբերեմ:

ԵՐՎԱՆԴ - Ժամանակին պիտի բերեիր: Էլ ո՞ւմ է պետք: Իսկ բանավո՞ր:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - *(Մատը քունքին է տանում)* Խենթ էր... ոնց որ պակաս լիներ...

ԵՐՎԱՆԴ - Ավե՞լ, թե պակաս...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Ոնց որ ավել...

ԵՐՎԱՆԴ - Մոտերքում եղիր: Սեղրակյա՞ն:

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Լսում եմ, շեֆ:

ԵՐՎԱՆԴ - Իմ խոսքն ի՞նչ եղավ:

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Ձեր ձեռքին է, շեֆ:

ԵՐՎԱՆԴ - Սա՞ է ... փոքր չե՞... Այդպես, այդպես... Էս ի՞նչ ես գրել, այ տղա: Էսպե՞ս են գրում:
 Սրանից ի՞նչ է երևում. ո՞ւմ ենք թաղում... Էս գործով քեզ էլ կարելի է հանգիստ թաղել,
 Սեղրակյան: Գլոբալ մտածողություն չկա: Թափ չկա: Զգացմունք չկա: Սա գիտե՞ս ինչ
 խոսք պետք է լինի: Չուն: Ժառանգի խոսք: Սեղրակյան: Ուղղված հորը: Ուղղված մեր
 նախնիներին: Պետք է լինի երդում: Երդում հավատարմության...

ՍԵՆՏԻՄԵՆՏԱՆ - Էլ ի՞նչ գրեի, ընկեր Ջանազանյան. ախր ես նրան չեի ճանաչում...

ԵՐՎԱՆԴ - Առավել ևս պետք է ազատ ու վստահ գրեիր... Ճանաչելը ավելի հաճախ խանգարում է ... Մի խոսքով ամեն ինչ հասկացա՞ր, Խորենյան:

ԱՐՄԵՆ - Հասկացա, ընկեր Ջանազանյան:

ԵՐՎԱՆԴ - Ուրեմն ինքդ էլ կխմբագրես:

ԱՐՄԵՆ - Ե՞ս: Ես փորձ չունեմ, ընկեր Ջանազանյան:

ԵՐՎԱՆԴ - Ձեռք բեր... Տեսնում ես, որ պետք է գալիս... Առավոտյան կտաս ինձ: Օհ, շատ է ցավում գլուխս, ինչի՞ց կլինի:

1-ԻՆ ԾԵՆՈՒՆԻ - Սովից է, ընկեր Ջանազանյան: Բոլոր գլխացավանքները սովից են լինում:

ԵՐՎԱՆԴ - Հետաքրքիր միտք էր... Եվ ճշմարտացի... Բայց ի՞նչ կարելի է անել:

1-ԻՆ ԾԵՆՈՒՆԻ - Արդեն ամեն ինչ արված է, ընկեր Ջանազանյան... Համեցեք կողքի սենյակը:

ԵՐՎԱՆԴ - Կողքի սենյակում ի՞նչ կա:

1-ԻՆ ԾԵՆՈՒՆԻ - Մի թեթև սեղան եմ գցել: Բա հո չի՞ կարելի, որ ձեր մակարդակի մարդիկ սոված մնան: Բա մեր սերունդը ինչի՞ համար է պայքարել:

ԵՐՎԱՆԴ - Ի՞նչ էք ասում, հարմա՞ր է, որ...

1-ԻՆ ԾԵՆՈՒՆԻ - Քեֆ չենք անում... մի քիչ խաշլամա է, բաստուրմա, սուջուխ, պոմիդոր, պանիր... մի քիչ թփով տոլմա... ինչ որ հարևանները ունենին...

ԵՐՎԱՆԴ - Դե եթե անհարմար չէ... Այնտեղ հեռախոս կա՞ ... Որպեսզի աշխատենք:

1-ԻՆ ԾԵՆՈՒՆԻ - *(Անջատում է հեռախոսի սարքը)* Բերում եմ...

ԵՐՎԱՆԴ - Դե լավ: Սեղրակյան, ներս անցիր: Խորենյան, մնա դռան մոտ: Եթե որևէ արտակարգ դեպք պատահի՝ տեղեկացրու:

1-ԻՆ ԾԵՆՈՒՆԻ - Լսում եմ, ընկեր Ջանազանյան:

ԵՐՎԱՆԴ - Դե ուրեմն գնանք, մի քիչ աշխատենք... Դուրը աչալուրջ պահիր, Խորենյան:

(ներս են մտնում)

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

(Արմեն Խորենյանը մտայլ քայլում է սենյակով, նայում նկարներին)

ԱՐՄԵՆ - *(Մեկուսի)* Դուրը պահպանիր... Տես ինչի տեղ է դրել ինձ... Ոտքից գլուխ ոչնչություն էն ու... դուրը պահպանիր, Խորենյան... Դե իհարկե, առանց պահապանի ի՞նչ պիտի անեք, ձեզ ամեն տեղ պահապաններ են պետք...

(Բացվում է դուռը, հայտնվում է Երվանդը ծամելով)

ԵՐՎԱՆԴ - Էդպես էլ գիտեի... պատկերասրահ ես եկել, ինչ է ... Ժամանակ մի կորցրու, այ տղա, իմ խոսքը սարքի...

ԱՐՄԵՆ - Լսում եմ, ընկեր Չանազանյան...

(Երվանդը փակում է դուռը)

Լսում եմ, ընկեր Չանազանյան... Հը, մտքումդ հերոս ես, դե պատասխանիր, է՞, ընկեր Արմեն Խորենյան... Լսում եմ, ընկեր Չանազանյան... թյու...

(Բացվում է դուռը, հայտնվում են առաջին պատկերի ծերունիներն ու պառավները և էլի ուրիշներ՝ վախեցած դրան կողմն են նայում և ներս տանում զանազան սոււփեր, պարկեր, շերի արկղեր, փաթեթներ)

1-ԻՆ ՊԱՌԱՎ - Արևդ ապրի, ինձ կհիշեցնես, իմ սովորությունն է՝ աղն ու անձեռոցիկները մոռանալու եմ:

2-ԲԴ ՊԱՌԱՎ - Վայ, ես էլ միշտ բացիչներն եմ մոռանում...

1-ԻՆ ՊԱՌԱՎ - Դե դա հիմա կարելի է ... ո՞ւմ են պետք:

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Ամոթ չլինի հարցնելը՝ քելեխին լինելու ե՞ս...

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Ոչ:

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Չեմ սիրում էդ գործը, բայց որ հանձնարարել են՝ ի՞նչ անեմ...

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Ի՞նչ են հանձնարարել:

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Դուրը կնքելու եմ զմուռսով:

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Ինչո՞ւ :

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Որ ուրիշները հանկարծ ներս չմտնեն ու տանը տիրանան... դե անտեր մեռել է: Ես հենց նման դեպքերում դռները կնքող հանձնաժողովի մեջ եմ: Թե չէ ես

այստեղ ի՞նչ գործ ունեի... Ոչ ճանաչում էի մարդուն... նրա համար եմ ասում, որ եթե քելեխին մնամ, չմտածեք, թե ես քելեխ ուտողներից եմ... Իմ գործի բնույթն է այդպես...

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Հասկանալի է:

(Հանկարծ կողքի դռնից ծիծաղի ձայն է գալիս)

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Վայ, է՞ղ ինչ անամոթներ են...

(Ուզում է ներս գնալ, Խորենյանը չի թողնում)

ԱՐՄԵՆ - Թաղման հանձնաժողովն է ...

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Հա... *(ետ-ետ է գնում):* Հա...

(Մուտքի դռնից ներս է գալիս ու դռան առջև անշարժանում ճեփ-ճերմակ մազերով, նիհարալույն, պատկառելի մի կին: 4-րդ ծերունին դեպի նա է գնում, բռնում, համբուրում է ձեռքը)

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Շուշանիկ...

ՇՈՒՇԱՆԻԿ - Դու այստեղ ես, Վահրամ: Ինչ լավ է, որ դու այստեղ ես...

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Ոչ որի չեմ ճանաչում, Շուշանիկ: Գնանք, ուղեկցեմ քեզ:

ՇՈՒՇԱՆԻԿ - Մի նեղանա, բայց ես կուզեի միայնակ...

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Դե իհարկե, իհարկե...

(Կողքի սենյակից հայտնվում են Երվանդը, Սեդրակյանը, 1-ին ծերունին: Նրանք կուշտ ու գոհ դեմքեր ունեն: Երվանդի քունը որոշակիորեն տանում է)

ԵՐՎԱՆԴ - Նորություն:

ԱՐՄԵՆ - Ամեն ինչ կարգին է:

ԵՐՎԱՆԴ - Իմ խոսքը...

ԱՐՄԵՆ - *(Գլխով ցույց տալով մարդկանց)* Այստեղ աշխատել չի լինի, ընկեր Զանազանյան, տանը...

ԵՐՎԱՆԴ - Իսկ սրա՞նք ինչ են անում այստեղ... *(Խիստ դիտում է)* Դուք ազատ եք...

(Բոլորը դուրս են գալիս)

Ղարիբյանը դեռ չկա՞...

ԱՐՄԵՆ - Մթերքները բերեցին...

ԵՐՎԱՆԴ - Իսկ պիոներներն ո՞ր են, Սեդրակյա՞ն...

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Բոպե առ բոպե կհայտնվեն...

ԵՐՎԱՆԴ - Կաշիդ կքերթեմ: Պա՞րզ է:

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Պարզ է, ընկեր Զանազանյան:

ԵՐՎԱՆԴ - Հերթապահների ցուցակը:

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Խնդրեմ:

ԵՐՎԱՆԴ - *(Կարդում է)* «Մեր ժողովրդի նշանավոր զավակ Հայկ Մկրտչյանի թաղման արարողությունը արժանավայել կազմակերպելու համար ստեղծել մշտական գործող հերթապահություն, հետևյալ կազմով... » Խորենյան, ամենամեծ պատիվը քոնն է՝ ամենաառաջինը դու ես հերթապահելու:

ԱՐՄԵՆ - Ե՞րբ, ընկեր Զանազանյան:

ԵՐՎԱՆԴ - Համարիր, որ արդեն հերթապահության մեջ ես: Քեզ կփոխարինի Սեդրակյանը: Սեդրակյանին կփոխարինի Ղարիբյանը, Ղարիբյանին կփոխարինի Տիտանյանը...

ԱՐՄԵՆ - Գուցե զույգ-զույգ հերթապահենք, ընկեր Զանազանյան:

ԵՐՎԱՆԴ - Ոչ: Պրոտոկոլով նախատեսված չէ: Չլինի՞ վախենում ես, այ տղա...

ԱՐՄԵՆ - Ճիշտը որ ասեմ...

ԵՐՎԱՆԴ - Մի ասա... Ապրողներից վախեցիր, Խորենյան, ապրողներից: Ամոթ: Երկրի հույսը դուք եք: *(նայում է ձեռքի ցուցակին)* Ահա, ըստ ծրագրի այսօրվա անելիքներն ավարտված են: Վերջ: Գնացինք: Ոչ, ոչ, սպասեք, մի կետ էլ կա՝ դազադի կափարիչը ներս բերել:

1-ԻՄ ԾԵՆՈՒՆԻ - Լսում եմ: Դազադի կափարիչը ներս բերել: *(Սեդրակյանը մոտենում է Խորենյանին)*

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Արմեն ջան, հոգուդ մեռնեմ, փրկիր ինձ:

ԱՐՄԵՆ - Ի՞նչ է պատահել:

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Այսօր գալու են աղջկաս ուզելու... Ես որ տանը չլինեմ ո՞նց կլինի:

ԱՐՄԵՆ - Լավ: Հիմա դու հերթապահի, իսկ քո ժամին ես կգամ...

ՍԵՂՐԱԿՅԱՆ - Արմեն ջան, ասում եմ գալու եմ աղջկաս ուզելու... Հազար ու մի հարց կա: Ամսվա վերջ է, չեկա էլ ձեռքիս է մնացել, կարագն էլ չեմ ստացել: Օգնիր, Արմեն ջան, մարդ ենք, չէ՞, ընկեր ենք, չէ՞, բարեկամ ենք, չէ՞... *(առանց սպասելու պատասխանի)*
Շատ-շատ շնորհակալություն, հավիտյան չեմ մոռանա ...

(դուրս է գալիս)

ԱՐՄԵՆ - Էդ լոգունգները միակողմանի՞ են, միայն իրենց օգտի՞ն են: Կուշտ կերան, խմեցին ու խնդրեմ, հերթապահիր, Խորենյան: Խորենյանը ոչ ստամոքս ունի, ոչ տուն: Հերթապահիր, Խորենյան, զգաստ, Խորենյան, քայլով մարշ, Խորենյան, գլուխդ բարձր, Խորենյան:

(Ներս է մտնում ավագ ջոկատավարուհին երկու պիտներներով)

ԱՎԱԳ ՋՈՎ. - Հավասար, զգաստ: Ընկեր թաղման հանձնաժողովի ներկայացուցիչ, Երևանի Պարոնյանի անվան դպրոցի, Կարլ Մարքսի անվան պիտներական դրուժինայի, Մարտիրոս Վարդանյանի անվան ջոկատի պիտներները պատրաստ են մասնակցելու սիրելի հեղափոխականի մահվան առթիվ կազմակերպված հանդիսավոր հերթապահությանը: Դպրոցի ավագ ջոկատավար Ստեփանյան:

ԱՐՄԵՆ - Ազատ: Խոսքս բոլորիդ է վերաբերվում: Բոլորդ էլ ազատ եք:

ԱՎԱԳ - Թույլ տվեք չհասկանալ: Հերթապահության համար ընտրվել են լավագույնները՝ գերազանց վարքի տեր և բարձր առաջադիմություն ունեցող պիտներները: Նրանց ցուցակը հաստատված է դրուժինայի խորհրդում: Նրանք հիանալի գիտեն իրենց անելիքները...

ԱՐՄԵՆ - Իսկ նրանք գիտե՞ն, թե ում են թաղելու:

ԱՎԱԳ ՋՈՎ. - Աննկուն հեղափոխականի, արդարության անձնուրաց և անձազոհ հրամանատարի, ողջ կյանքը առաջավոր մարդկության վսեմ գաղափարնե...

ԱՐՄԵՆ - Անուն-ազգանունը գիտե՞ս...

ԱՎԱԳ ՋՈՎ. - Անուն ազգանունը մեզ չեն հայտնել:

ԱՐՄԵՆ - Գնացեք, ընկեր Ստեփանյան, մեղք են երեխաները, տեսնո՞ւմ եք, արդեն քնել են ուզում...

ԱՎԱԳ ՋՈՎ. - Մեզ վստահված է ... մեզ կարգադրված է ...

ԱՐՄԵՆ - Այստեղ կարգադրողը ես եմ: Զգաստ: Աջ դարձ: Դեպի դուրս քայլով մարշ: Մեկ-երկու...

(Ավագ ջոկատավարն ու պիոներները դուրս են գալիս)

Թող գոնե երեխաները հանգիստ քնեն...

(Շրջում է սենյակում, նայում պատերին, նկարներին, մի այթոռից մյուսին նստում: Ոչ բազմոց կա, ոչ մահճակալ: Չգիտի ինչ անել: Ասես կանգ է առել կյանքը և միայն պատի ժամացույցն է միալար ժամանակը հաշվում: Գնում, կողքի սենյակից բերում է հեռախոսը, միացնում է, հավաքում է համարը)

Ծովի՞ կ: Ես եմ:

ԾՈՎԻԿ - Արմե՞ն: Որտե՞ղ ես, այ տղա...

ԱՐՄԵՆ - Հերթապահում եմ: Ինչո՞ւ ես Զանազանյանի լեզվով խոսում, Ծովի՞ կ:

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Ի՞նչ Զանազանյան: Որտեղ ես, ասում եմ: Ինչո՞ւ տուն չես գալիս, Արմեն:

ԱՐՄԵՆ - Ասում եմ՝ հերթապահում եմ:

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Ի՞նչ հերթապահություն , որտե՞ղ ես...

ԱՐՄԵՆ - Մի խոսքով՝ միջոցառում կա...

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Արմեն, Արմեն, ի՞նչ ես անում... Ես այլևս ուժ չունեմ... Բավական է ...

Ինչո՞ւ ինձ չես խղճում: Ես հոգնել եմ քո միջոցառումներից... Անիծվեր այն օրը, որ այդ աշխատանքին անցար... Ինձ չես խղճում, գոնե տղաներիդ խղճա, արդեն մեծ են, հասկանում են ամեն ինչ...

ԱՐՄԵՆ - Ի՞նչ են անում:

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Ֆուտբոլ են խաղում բակում:

ԱՐՄԵՆ - Երանի նրանց...

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Քեզ էլ երանի... ինձ նստեցնում ես տանն ու ման ես գալիս քեզ համար...

միջոցառումներ ես անցկացնում... Գիտենք, թե դրանք ինչ միջոցառումներ են...

Մտածում էի, թե արդեն վերջ, խելքի է եկել... Որտեղի՞ց ես խոսում, ես քեզ հարցնում եմ՝ որտեղից ես խոսում

ԱՐՄԵՆ - Չգիտեմ:

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Ո՞նց թե չգիտես: Ձեռք ես առնո՞ւմ: Կողքիդ ո՞վ կա: Չէ, դե ասա, կողքիդ ո՞վ կա:

ԱՐՄԵՆ - Հանգուցյալ:

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Ի՞նչ ... ի՞նչ-ի՞նչ...

ԱՐՄԵՆ - Հանգուցյալ, ասում եմ...

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Խելագարվել կարելի է: Հարբած ե՞ս: Որտե՞ղ ես, ես ուզում եմ տեսնել քեզ:

ԱՐՄԵՆ - Տանն ուտելու բան կա՞:

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Էս ի՞նչ է հարցնում: Ես ուզում եմ հենց հիմա տեսնել քեզ: Եթե ես հենց հիմա չտեսնեմ քեզ, Արմեն, դու ինձ այլևս երբեք չես տեսնի:

ԱՐՄԵՆ - Ես քեզ հասկացա: Կիևյան փողոցի վրայի հին բոլշևիկների շենքը գիտե՞ս: Ուտելու բան վերցրու ու արի: Առաջին մուտքի, առաջին հարկի ձախ կողմի բնակարանն է:

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Դու, էդտեղ ի՞նչ ես անում, Արմեն:

ԱՐՄԵՆ - Սկզբից սկսե՞մ:

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Գալիս եմ, այ...

ԱՐՄԵՆ - Արի, Ծովիկ...

ԾՈՎԻԿԻ ՉԱՅՆԸ - Գալիս եմ, այ...

(Անջատում է հեռախոսը)

ԱՐՄԵՆ - Ինչո՞ւ երբ ճիշտ ես ասում՝ չեն հավատում:

(ներս է մտնում առաջին պատավր)

1-ԻՆ ՊԱՌԱՎ - Բարի երեկո ձեզ: Կներես, որդի ջան, հարսս տուն եկավ ու որ իմացավ «Ռոջերսի» աթոռներն եմ տվել ձեզ, բարկացավ վրաս: Թող տանեմ, հա՞:

ԱՐՄԵՆ - Տար, մայրիկ:

(մի քիչ զրույց)

1-ԻՆ ՊԱՌԱՎ - Ի՞նչ անեմ, որդի ջան, հարս է, էլի...

(Արմենը օգնում է, աթոռները դուրս են տանում)

ԱՐՄԵՆ - Բա հիմա ես ի՞նչ անեմ... Է՞ս ինչ պատուհաս էր...

(Աթոռները միացնում է իրար, պատկում, չի հարմարվում, նորից է միացնում մեկ ուրիշ տեսակ, պատկում է, փակում աչքերը: Ինչ-որ ձայներ է լսում, վեր է թռչում ահաբեկված: Դրսից ու կողքի պատերից են հասնում ձայները)

ՁԱՅՆ - Կարեն, Կարեն...

ՁԱՅՆ - Ինչա, է ...

ՁԱՅՆ - Հայրիկն եկել է, արի... Ձմերուկ է բերել, բալիկ ջան, ձմերուկ...

ՁԱՅՆ - Սիրուշ, տես հո ավտոյին ձեռք տվող չկա՞ ...

ՁԱՅՆ - *(Դաշնամուրի նվագի տակ)* Սոլ, սոլ, բուրժ անտեր, սոլ...

ՁԱՅՆ - Եկար, հա՞, անուշիկա... էլի լակել ես... Կարո՞ղ ես ինքնուրույն մոտենալ... տոտիկ-տոտիկ, այ այդպես... բա ընկերներդ ո՞ւր են... թաղեմ նրանց բոյը...

(Արմենը չի կարողանում պատկել, նստում է, բացում ելույթը)

ԱՐՄԵՆ - «Դաժան մահը մեր շարքերից խլեց...» Գուցե անգութ, հը՞ : Բայց ինչն է փոխվում: Ինչո՞ւ դաժան, ինչո՞ւ անգութ: Եթե պարտադիր ու անխուսափելի է, էլ ի՞նչ դաժան: Բառեր են, էլի: Ոչինչ չասող: Եվ ում ասես կարելի է վերագրել... Ում ասես...

(Լսվում է դռան զանգ: Արմենը մոտենում, բացում է դուռը)

ԾՈՎԻԿ - *(Զամբյուղով և պայուսակով)* Արմե՞ն: Ի՞նչ ես անում այստեղ, այ մարդ: Էս ո՞ւմ տունն է: Ազնիվ խոսք մտածեցի, թե հարբած ես ու կատակ ես անում:

ԱՐՄԵՆ - Կամաց, Ծովիկ:

ԾՈՎԻԿ - Ինչո՞ւ: Տանն ուրիշ մա՞րդ կա:

ԱՐՄԵՆ - Ասացի չէ, հանգուցյալ կա:

ԾՈՎԻԿ - Ի՞նչ ես խոսում, որտե՞ղ է:

(Արմենը գլխով ցույց է տալիս: Ծովիկը մտնում է դռնից, վերադառնում գունատված և տխուր)

Ո՞վ է, Արմեն:

ԱՐՄԵՆ - Մարդ է, էլի, ի՞նչ իմանաս:

ԾՈՎԻԿ - Լսիր, հո չե՞ս գժվել...

ԱՐՄԵՆ - Սոված մեռնում եմ, Ծովիկ...

ԾՈՎԻԿ - Բա ինչո՞ւ տուն չես գալիս...

ԱՐՄԵՆ - Ասացի, չէ, միջոցառում է...

ԾՈՎԻԿ - Կեր... ի՞նչ միջոցառում, ի՞նչ ես ասում:

ԱՐՄԵՆ - Հերթապահ եմ...

ԾՈՎԻԿ - Բայց ինչո՞ւ հենց դու... Ոչ որ չունի՞: Կեր:

ԱՐՄԵՆ - Ինձ ամենամեծ պատիվն է տրված... ես առաջին հերթապահն եմ:

ԾՈՎԻԿ - Բայց ինքն ո՞վ է, ինքը... Այդ խեղճ մարդը...

ԱՐՄԵՆ - Ի՞նչ իմանամ: Երբ տեսա, նոր հիշեցի, որ մի քանի անգամ նկատել եմ մեր հիմնարկում... Շատ էր ուզում Ջանազանյանի մոտ ընկնել, չէր կարողանում... Հասարակ, խեղճ մարդ էր... Իսկ այսօր իմացա, որ մեծ մարդ է եղել... Բոլորը խառնվել են իրար, Ջանազանյանն ինքը թաղման հանձնաժողովի նախագահն է...

ԾՈՎԻԿ - Ի՞նչ ես ասում՝ գուցե տիեզերագնացության հարցերով է զբաղվել:

ԱՐՄԵՆ - Նրանց թոշակի չեն ուղարկում:

ԾՈՎԻԿ - Գուցե ֆիզիկոս է ...

ԱՐՄԵՆ - Գուցե...

ԾՈՎԻԿ - Լավ, ինչպես ասում են՝ տերն իր հետ: Ինչ ուզում է թող եղած լինի: Թեև գիտես, սիրտս լցվեց մի տեսակ, ասես հարազատ լիներ: Հայրիկին նման չէ՞ր, Արմեն:

ԱՐՄԵՆ - Ի՞մ:

ԾՈՎԻԿ - Չէ, իմ: Դու կեր, կեր...

ԱՐՄԵՆ - Կարծես թե նման էր...

(Ուտում է շտապով ու մտախոհ)

ԾՈՎԻԿ - Դու ի՞նչ գործ ունես այստեղ, Արմեն...

ԱՐՄԵՆ - Ի՞նչ... Հետաքրքիր աղջիկ ես, համոզվեցի՞ր որ աշխատանքի մեջ եմ:

ԾՈՎԻԿ - Մի նեղանա... Բայց ախր սա ի՞նչ աշխատանք է, Արմեն ջան... Սա ի՞նչ մասնագիտություն է, որ ամեն ինչի հետ կապ ունի և նույնիսկ հանգուցյալի հետ:

ԱՐՄԵՆ - Իսկ դու ի՞նչ էիր ուզում:

ԾՈՎԻԿ - Բա մարդ իր հրաշալի, բացառիկ մասնագիտությունը կթողնի ու...

ԱՐՄԵՆ - Դու չէի՞ր լաց լինում իմ բացառիկ մասնագիտության ձեռքից:

ԾՈՎԻԿ - Որովհետև փող չէիր տուն բերում...

ԱՐՄԵՆ - Տալիս էին ու չէի՞ բերում: Ե՞ս եմ մեղավոր, որ գրադարանում գրքեր բաժանող աղջկան ու ինձ՝ որ էլեկտրոնային հաշվիչ մեքենա էի աշխատեցնում, հավասար աշխատավարձ էին տալիս՝ 120 ռուբլի:

ԾՈՎԻԿ - Բայց դու ինժեներ էիր, մեծ ապագա ունեիր... արդեն պատրաստվում էիր դիսերտացիա պաշտպանել...

ԱՐՄԵՆ - Մինչև պաշտպանել՝ կմեռնեի՞նք սովից: Այնտեղ բոլորն էլ պատրաստվում են դիսերտացիա պաշտպանել:

ԾՈՎԻԿ - Եվ դու չե՞ս ամաչում, Արմեն: Հիմա ո՞վ է սովից մեռնում...

ԱՐՄԵՆ - Երբ երեխա ունեցանք ու աշխատավարձս մնաց նույնը, հուսահատվեցի: Հանկարծ զգացի, որ էլ չեմ կարող առաջվա նման, որ խեղդվում եմ: Հանկարծ մտածեցի, որ կյանքը սլանում է իմ կողքով՝ ճեպընթացի նման, իսկ ես քաշ եմ գալիս փոշոտ ճամփեզրով: Եվ ինքդ էլ գիտես, ես ձեզ համար հրաժարվեցի կիրբեռնետիկայից, որովհետև կիրբեռնետիկան ապագայի գիտություն է, իսկ դուք այսօր եք ուզում ապրել: Կարծում ես մոռացել եմ, թե ինչ աչքերով էիր վերադառնում շուկայից: Կարծում ես չէի՞ նկատում, թե ինչպես ես ամաչում հենց քո հարազատներից, երբ ամեն անգամ նույն զգեստով ստիպված էիր մասնակցել նրանց հիշարժան տարեթվերին:

ԾՈՎԻԿ - Ճիշտ չէ, հետո ես հորինել՝ քեզ արդարացնելու համար: Այդ դեպքում ինչո՞ւ հենց նույն ինստիտուտում բանվոր չէիր աշխատում, չէ՞ որ բանվորը կրկնակի բարձր աշխատավարձ էր ստանում քեզանից: Կամ ինչո՞ւ տաքսիի վարորդ չդարձար, որպեսզի քո երեխաներն էլ կարատե պարապեին ու նվագեին ջութակ, իսկ կինդ էլ ամեն անգամ նոր զգեստով ներկա լինի քո հարազատների հիշարժան տարեթվերին: Մուտ է:

ԱՐՄԵՆ - Հնացած տեղեկություններ են, Ծովիկ: Հիմա բարձրագույն կրթությամբ մարդկանց ոչ բանվոր են ընդունում և ոչ էլ տաքսու վարորդ: Այդ հարցն էլ է լուծված

ԾՈՎԻԿ - Քեզ համար բոլոր հարցերը լուծված են:

ԱՐՄԵՆ - Դե չէ, բայց կլուծվեն, կասկած չունենաս: Ես ճիշտ ճանապարհի վրա եմ:

ԾՈՎԻԿ - Տեսնում եմ՝ հավերժի ճանապարհին հանգուցյալների ուղեկցող ես աշխատում:

ԱՐՄԵՆ - Համբերություն, կին, համբերություն...

ԾՈՎԻԿ - Իսկ ուրիշ ի՞նչ է ինձ մնում անել: Արմեն ջան, հավատա ինձ, սիրտս ցավում է քեզ համար: Մի թե դու իմ առաջվա Արմենն ես: Այդ ի՞նչ արեցիր քեզ հետ: Քո սկզբունքներին դավճանելու, քո ուսուցիչներին մատնելու համար քեզ նույնիսկ հասանելիք երեսուն արծաթը չտվեցին: Ինչո՞ւ ախր: Այդքան էժանացե՞լ է դավաճանությունը:

ԱՐՄԵՆ - Ինչքան ես սիրում գեղեցիկ խոսել: Քո բանասիրական կրթությունը, սիրելիս, ուրիշ բանի պետք չեկավ: Ի՞նչ դավաճանություն, ի՞նչ բան...

ԾՈՎԻԿ - Ուրեմն դավաճանություն չէ՞, որ ինչ ձեռք էիր բերել երեսուն տարիների ընթացքում, մի վայրկյանում դեն նետեցիր... դավաճանություն չէ՞ր, որ գործդ կիսատ թողած փախար ինստիտուտից, երբ պրոֆեսոր Մեհրաբյանն այնքան հույս էր կապում քեզ հետ, իր հետևորդն ու ժառանգն էր համարում...

ԱՐՄԵՆ - Պրոֆեսոր Մեհրաբյանն հիմա ինքն է ինձ մոտ գալիս՝ խորհուրդներ հարցնելու...

ԾՈՎԻԿ - Որովհետև կրկնակի դավաճանությունից է վախենում: Որովհետև գիտի, որ քեզ համար դատարկ բան է նրան խանգարելը: Ընդամենը հեռախոսի մի գանգ: Ընդամենը կիսաձամձմված, կիսաանորոշ մի արտահայտություն. «Իսկ մեզ մոտ տեղեկություններ կան, որ...»: Ուրիշ ոչինչ: Եվ նա ստիպված կլինի ամեն ինչ գրոյից սկսել:

ԱՐՄԵՆ - Իսկ քիչ առաջ ասում էիր, թե ես գրեթե ոչնչության եմ վերածվել:

ԾՈՎԻԿ - Ճիշտ չէ, ես միայն ասացի, որ իմ կարծիքով դավաճանելու համար քեզ անխղճորեն քիչ են վճարում, Արմեն: Որովհետև այդ ամենից հետո քո տղաները, միևնույն է, հնարավորություն չունեն կաշվե զգեստներ հագնել և զարնանը ուտել ելակի առաջին բերքը:

ԱՐՄԵՆ - Համբերություն, Ծովիկ, համբերություն... Եվ դուք ամեն ինչ կունենաք...

Համբերություն, Ծովիկ: Կտեսնես, քո մտահոգությունը միայն այն կլինի, թե ինչպես ապահով թաքցնես մեր ունեցվածքը: Այդքանը: Փաստեր չե՞ս ուզում, փաստեր: Միրզոյանին հիշո՞ւմ ես: Բոլորը ծիծաղում էին նրա վրա: Մտորաքարշ ու պնակալեզ էին համարում: Իսկ հիմա իրենք են պատրաստ լիզելու նրա կոշիկները, որովհետև բնակարաններ է բաշխում: Միլիտոսյանին հո լավ գիտես: Զանազանյանը նրան փաղաքշաբար «իմ տհաս բալիկ» էր անվանում: Իսկ հիմա այդ տհաս բալիկը պտուղբանջարեղենի ողջ առևտուրն է դեկավարում: Եվ ապրում է: Մի օր ինձ ասաց. «Պատկերացնում ես, Արմեն, աշխատողներին ինչ ասում եմ, լսում են: Մեկ-մեկ ծիծաղս գալիս է»: Սա ուստնակ է, Ծովիկ, ուստնակ՝ քո ուզած տեղը ցատկելու համար: Միայն դիմանալ է պետք: Եթե ուզում ես ինչ-որ բանի հասնել, պետք է դիմանաս: Զանազանյանը երեք տարի իմ տեղում է աշխատել...

ԾՈՎԻԿ - Այդ խրտվիլակը, որ կամ լոզունգներ է արտասանում կամ հայեցում:

ԱՐՄԵՆ - Ես ասում եմ նրան, բայց դա ի՞նչ նշանակություն ունի, հիմա նա ինձ պետք է:

ԾՈՎԻԿ - Այնքան է պետք, որ նույնիսկ քո տան մեջ է հայիոյում, և դու նրան չես համարձակվում վռնդել...

ԱՐՄԵՆ - Ո՞վ է իր պետին վռնդում, Ծովիկ... Համբերություն, ասում եմ: Մինչև որ ես կհասնեմ իմ նպատակին...

ԾՈՎԻԿ - Ու մի օր տխուր-տխուր կհաշվես, թե ինչ ես ստացել և ինչ ես կորցրել փոխարենը... անվերադարձ:

ԱՐՄԵՆ - Խոսքեր, խոսքեր, խոսքեր, ասում էր Համլետը:

ԾՈՎԻԿ - Ես ի՞նչ անեմ: Ես ինչ անեմ, քեզ համար, Արմեն... Ես միայն մի բան գիտեմ, որ շատ տխուր է լինելու սրա վերջը: Ախր դու արդեն ջահել չես...

ԱՐՄԵՆ - Դրա համար էլ վերադառնալն անմտություն է:

ԾՈՎԻԿ - Ես այլևս ասելու բան չունեմ, Արմեն:

ԱՐՄԵՆ - Շատ ուրախ եմ:

ԾՈՎԻԿ - Միայն մի հարց... Դու կուզենայի՞ր, որ քո որդիները՝ մեր Լևոնն ու Աշոտը քեզ նման մտածեին... Որ քո կամ Ղարիբյանի, կամ Սեդրակյանի նման ապրեին: Ջանազանյանի նման պետ ունենային, դիմանային նրա ծաղրածանակին, կանխավճարով հաշտվեին իրենց ծառայողական հլու վիճակի հետ, հետագայում կուշտ ու շքեղ ապրելու համար: Միայն թե անկեղծ, խնդրում եմ, Արմեն...

ԱՐՄԵՆ - *(Տպտում է)* Սպորտի մեջ դա կոչվում է արգելված հարված, Ծովիկ: Աստված չանի: Բայց ախր ես, իմ կարծիքով ամեն ինչ անում եմ, հենց նրա համար, որ նրանք՝ իմ զավակները ստիպված չլինեն այդ անել...

ԾՈՎԻԿ - Քո կարծիքով... իսկ նրա՞նց:

ԱՐՄԵՆ - Գնա, հա՞:

ԾՈՎԻԿ - Գնում եմ: Մոռացել էի, որ աշխատանքի ժամին քեզ անհանգստացնել չի կարելի:

ԱՐՄԵՆ - Գնա Ծովիկ, գնա...

ԾՈՎԻԿ - *(Զգիտես ում)* Խեղճ մարդ...

(Կինը հեռանում է, սրբելով արցունքները)

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Նույն տեսարանը: Ժամացույցի ճոճանակի ձայնը: Արմենը չգիտի ինչով զբաղվել: Հուզված այս ու այն կողմ է տանում աթոռները: Հետո մենահայելու վրայից մի կողմ է քաշում սպիտակ սավանը, նայում է իր պատկերին. Տիրում է)

ԱՐՄԵՆ - Հը՞, քե՞զ ինչ պատահեց: *(Աչքով է անում իրեն, ծոմում է շրթունքները)* Լսիր, դու հո դերասան չե՞ս: Ինչո՞ւ ես խաղում: Ծովիկը քեզ ինչ արտառոց բան ասաց, որ դու չգիտեիր կամ որի մասին չէիր մտածել: Հը՞: Նա ասաց՝ խեղճ մարդ... Ո՞ւմ էր ասում, քե՞զ, թե նրան, որ պատկած է այնտեղ՝ հարևան սենյակում, աշխարհի հետ հաշիվները փակած...

Այ քեզ տարօրինակ պատմություն... ուրիշից լսեի, չէի հավատա: Որ մարդ գիշերի անձանոթ ու օտար հանգուցյալի տանը: Մեծ մարդ է ... Ջանազանյանի ելույթում ամեն տեղ մի գլուխ մեծ գնահատականներ են՝ մեծ մարդ, նշանավոր գործիչ, անձնուրաց հայրենասեր, քաջարի զինվոր, բայց թե ինչ է արել, ինչով է մեծ, որտեղ է կովել, ինչով է նշանավոր, ոչ մի խոսք: Դե եկ ու նոր խոսք գրի... Ո՞ր փաստերի հիման վրա...

(Աթոռները դասավորում է կրկին, պատկում: Լույսը խանգարում է: Եվ մրսում է միաժամանակ: Պատից պոկում է մեծ քարտեզը, ծածկվում դրանով: Վեր է կենում փակում մուտքի դռան կողպեքը, անջատում լույսը ու պատկում նորից: Մնում է միայն հանգուցյալի սենյակից ընկնող լույսը:

Լռություն: Միայն ժամացույցն է չիկչիկում: Հանկարծ լսվում է փականքի բացվելու ձայն: Մենյակում հայտնվում է ինչ-որ մեկը ու անշուշտ շարժվում է պատի տակով: Խորենյանը արթնացել է ու սարսափով հետևում է ստվերին: Մարդը մոտենում է ինչ-որ պահարանի, կռանում, բացում է դարակներից մեկը, միջից ինչ-որ բան է հանում կարծես թե... Խորենյանը նետվում է դեպի լամպի կոճակը, վառում լույսը:

Անձանոթը, որ ցերեկը տանը հայտնված սպիտակ մազերով պատկառելի կինն էր, թույլ ճչում է և սարսափած աչքերով նայում է Խորենյանին)

ՇՈՒՇԱՆԻԿ - Օհ, տեր աստված, ինչպես վախեցա:

ԱՐՄԵՆ - Ոչ մի շարժում: Ո՞վ էք դուք: Ինչպե՞ս ներս մտաք:

ՇՈՒՇԱՆԻԿ - *(Դողացող ձեռքը պարզելով)* Ես բանալի ունեմ... Իսկ դո՞ւք ով էք:

ԱՐՄԵՆ - Ես հերթապահ եմ... ինձ նշանակել են... ի՞նչ հանեցիք պահարանից: Ցույց տվեք անմիջապես:

ՇՈՒՇԱՆԻԿ - *(Թևի տակից հանում է կապը)* Սրանք... սրանք, ինձ սխալ չհասկանաս տղաս, ձեզ կամ որևէ ուրիշի համար ոչ մի արժեք չունեցող թղթեր են... Այս տանն ընդհանրապես որևէ արժեքավոր իր չկա... Թույլ տվեք նստել, օհ...

ԱՐՄԵՆ - Ուրեմն ինչո՞ւ էիք վերցնում:

ՇՈՒՇԱՆԻԿ - Նրանք իմն են... նամակներ են ինձ ուղղված... Եվ մի քանի... կրկնում եմ՝ որևէ մեկի համար արժեք չունեցող, բայց ինձ համար թանկագին մասունքներ...

ԱՐՄԵՆ - Իսկ ի՞նչ գործ ունեին ձեր նամակները հանգուցյալի տանը...

ՇՈՒՇԱՆԻԿ - Ինքն էր գրել ինձ տարիների ընթացքում... Հետո ես բերեցի.. ու մենք կարդում էինք միասին: Այդպես էլ մնացել էին այստեղ... Թույլ տվեք վերցնել, հա՞ ...

ԱՐՄԵՆ - Ներեցեք, բայց ինձ թվում է, թե չի կարելի:

ՇՈՒՇԱՆԻԿ - Բայց դրանք իմն են, իմը...

ԱՐՄԵՆ - Հիմա ո՞վ կարող է հաստատել այդ...

ՇՈՒՇԱՆԻԿ - Ոչ ոք:

ԱՐՄԵՆ - Դե տեսնում եք, իսկ ես հերթապահ եմ և պատասխանատու եմ ամեն ինչի համար: Եկեք առավոտյան, կխոսեմ նախագահի հետ, թող վճռի: Մի նեղացեք ինձանից, տիկին:

ՇՈՒՇԱՆԻԿ - Դուք իրավացի եք: Իհարկե: Ես գերեկն էլ եկա, բայց այնքան մարդիկ կային: Դա այնքան տարօրինակ էր այս տան համար, որտեղ ոչ ոք չէր լինում ինձանից բացի: Տեսնո՞ւմ եք, ես նույնիսկ այս տան բանալիները ունեմ: Ինքն էր տվել...

ԱՐՄԵՆ - Հասկանալի է:

ՇՈՒՇԱՆԻԿ - Համոզված չեմ, թե հասկանալի է ... Ուրեմն դուք կասկածում եք... *(Նայում է ծրարին)*

ԱՐՄԵՆ - Թող մնան, տիկին... Ես իրավունք չունեմ: Ինձ են վստահել...

ՇՈՒՇԱՆԻԿ - Վստահել... Մի՞թե դուք ճանաչում էիք նրան:

ԱՐՄԵՆ - Անկեղծորեն ասած՝ ոչ: Մի քանի անգամ միայն տեսել եմ մեր հիմնարկում...

ՇՈՒՇԱՆԻԿ - Գիտեմ, գիտեմ, բնակարանի հարցով էր գալիս, բայց այդպես էլ ոչինչ չստացվեց:

ԱՐՄԵՆ - Բնակարանի հարցո՞վ... Շատ հետաքրքիր է, ուրեմն այս երեք սենյականոց բնակարանը չէ՞ր բավարարում նրան:

ՇՈՒՇԱՆԻԿ - Ընդհակառակը... նա ուզում էր հանձնել այս բնակարանը և մի սենյականոց ստանալ, բայց ինչպես տեսնում եք՝ նրան դա չհաջողվեց:

ԱՐՄԵՆ - Ուրեմն դրա՞ համար էր... ժամերով նստում ընդունարանում...

ՇՈՒՇԱՆԻԿ - Միայն դրա համար:

ԱՐՄԵՆ - *(Ակամա հուզված է)* Տարօրինակ մարդ է եղել:

ՇՈՒՇԱՆԻԿ - Մի ժամանակ նման մարդկանց համարում էին արտառոց...

ԱՐՄԵՆ - Ներեցեք:

ՇՈՒՇԱՆԻԿ - Գոնե թույլ կտա՞ք մի քանի լուրջ նրա մոտ գնալ: Ո՞ւմ մտքով կանցներ, որ հերթապահություն է սահմանված: Ուզում էի նրա մոտ մնալ գիշերը:

ԱՐՄԵՆ - Ինչպես կամենաք, տիկին...

(Շուշանիկը հեռանում է: Խորենյանը զարմացած հայացքով հետևում է նրան: Քիչ հետո հանգուցյալի սենյակից մեղմ հեկեկոց է լսվում, և ապա խուլ արտասանված մի քանի խոսք. «Խաղաղվեցի՞ր, խոռված հոգի, խաղաղվեցի՞ր... մարդ աստծո...»: Կինն այնտեղ երևի միացնում է մագնիտոֆոնը, որովհետև հանկարծ շատ մեղմ սկսում է հնչել «Հայաստան, երկիր դրախտավայր» երգը: Խորենյանը հեռախոսի համար է հավաքում, խոսում է շշուկով)

ԱՐՄԵՆ - Ծով... Ծովիկ, դո՞ւ ես... ձայնդ լավ չի լսվում... հո չարթնացրի՞: Տղաներս ի՞նչ են անում: Քնա՞ծ են: Ո՞նց են տղերքս, Ծովիկ... ի՞նչ պիտի պատահի... Հանկարծ շատ կարոտեցի ձեզ... Մի հեզնի... դրա մեջ ճշմարտություն կա: Երբ գերեզմանատանն ես, ուրիշ տեսակ ես նայում կյանքին ու մարդկանց: Այդպես է: Ի՞նչ լսվո՞ւմ է: Մի կին է եկել, Ծովիկ, ինքն է միացրել... Հիմար-հիմար մի խոսիր, ծեր կին է ... Երևի մտերիմներ են եղել կամ ազգական է, ի՞նչ իմանամ: Լսիր, հո խելքդ չե՞ս թոցրել... վեր կաց, արի: Հա... վայ... մեր տղերքի արև... Ապշելու ցեղ եք, միշտ կասկածում ենք այնտեղ, որտեղ դրա կարիքը չկա: Բա ի՞նչ անեմ: Միշտ այդպես եմ ասում, որովհետև միշտ այդպես է եղել: Ամոթ է, ամոթ. ես վերեններում էի դու ինձ նորից ցած իջեցրիր: Բայց միևնույն է, ես ձեզ սիրում եմ, Ծով... քեզ ու իմ բալիկ-ալիքներին...

Դե լավ, մոտենում է, բարի գիշեր...

(Անջատում է լսափողը)

ՇՈՒՇԱՆԻԿ - Ներեցեք, ձեզ չի խանգարում, չէ՞: Այս երգը նրա պատվերով եմ ձայնագրել, հատիկ-հատիկ, երգեր, որ նվիրված են Հայաստանին: Ժամերով լսում ու չէր հագնում: Իսկ մի անգամ էլ ասաց... խնդրեց... եթե իրեն հետ որևէ բան պատահի... փողային նվագախումբ, լարային քառյակ կամ նման բաներ չլինեն... Միայն այս երգերը, Հայաստանին նվիրված երգերը...

ԱՐՄԵՆ - *(Անհամբեր)* Տիկին, իմ անունը Արմեն է, Խորենյան: Իսկ ձեզ ինչպե՞ս կոչեմ:

ՇՈՒՇԱՆԻԿ - Շուշանիկ:

ԱՐՄԵՆ — Տիկին Շուշանիկ, հետաքրքրասիրությունը ամենաձանր մեղքը չէ: Քիչ առաջ ես իմ պետի խոսքն էի կարդում՝ որ արտասանվելու է վաղը թաղման արարողության ժամանակ: Այդ խոսքի մեջ կենսագրական որևէ տեղեկություն չկա հանգուցյալի մասին: Դա իրոք արտառոց է:

ՇՈՒՇԱՆԻԿ - Կենսագրական տեղեկություններ լինել չէին կարող:

ԱՐՄԵՆ - Ինչո՞ւ: Ո՞վ է այդ մարդը:

ՇՈՒՇԱՆԻԿ - Ի՞նչ ասեմ: Ես չգիտեմ մահվան փաստը այս դեպքում թույլատրվո՞ւմ է հրապարակել... գոնե այնքանը, որքան հայտնի է ինձ: Կարծես թե թույլատրվում է ... Բոլոր դեպքերում եթե այդ հարցը դուք ինձ տաք վաղը, գուցե կարողանամ պատասխանել, ինչ գիտեմ: Ես էլ իմ պետն ունեմ:

ԱՐՄԵՆ - *(Ակամա ծպտում է)* Հանձնվում եմ, տեղն է ինձ...

ՇՈՒՇԱՆԻԿ - Չէ տղաս, ոչ դրա համար... Իսկապես այդպես է:

ԱՐՄԵՆ - Բայց վերջապես հո միջուկագետ չի՞ եղել նա...

ՇՈՒՇԱՆԻԿ - Չգիտեմ: Գիտեմ միայն, որ ավելի քան քառասուն տարի ապրում էր մեկ այլ երկրում:

ԱՐՄԵՆ - Որտե՞ղ:

ՇՈՒՇԱՆԻԿ - Թուրքիայում:

ԱՐՄԵՆ - Թուրքիայո՞ւմ:

ՇՈՒՇԱՆԻԿ - Այո:

ԱՐՄԵՆ - *(Երեխայի նման)* Տիկին Շուշանիկ, դուք հո չե՞ք ուզում, որ ես հետաքրքրությունից խելագարվեմ: Գոնե կարո՞ղ եք ասել, թե որտեղից եք ճանաչում նրան, ինչպես եք հանդիպել, ով էր նա...

ՇՈՒՇԱՆԻԿ - Հավաստացնում եմ, որ շատ երկար ու հին պատմություն է, տղաս... Եվ ես իրոք հիմա ի վիճակի չեմ խոսելու այդ մասին... ինչ որ ձեզ հետաքրքրում է, հավանաբար կգտնեք այդ նամակների մեջ, կկռահեք պատառիկներից, և հետո որքան ինձ հայտնի է, նա վերջին երկու տարում հուշեր էր գրում... Թաքցնում էր խնամքով... Բայց կնոջ աչքից ի՞նչ կարելի է թաքցնել... Գուցե այդ հուշերը և՛ ս այս թղթապանակի մեջ են: Գուցե ուրիշ թղթեր էլ կան...

ԱՐՄԵՆ - Իրոք որ... թույլ կտա՞ք կարդալ...

ՇՈՒՇԱՆԻԿ – Մի՞թե ձեզ թույլտվություն է պետք... Չէ՞ որ ձեզ են վստահել, նշանակել...

ԱՐՄԵՆ - Տիկին Շուշանիկ....

ՇՈՒՇԱՆԻԿ - Ես գնամ նրա մոտ...

ԱՐՄԵՆ - Այո, այո, իհարկե...

(Մի քանի քայլ ուղեկցում է կնոջն ու անմիջապես էլ շտապով ետ դառնում, վերցնում թղթապանակը, բացում, թղթերը թափվում են ցած: Արմենը վախեցած Շուշանիկի կողմն է նայում, կռանում, հավաքում է նամակները... դեռ լրիվ չհավաքած սկսում է կարդալ ինչ-որ թուղթ և տարվում է: Մյուս սենյակից հնչում է «Գիլիկիա» երգը: Արմենը կարդում է մի թուղթը, հետո մյուսն է վերցնում, հետո մեկ ուրիշը, թերթում է, կարդում է, հափշտակված)

ԱՐՄԵՆ - Խելագարվել կարելի է: Հեքիա՞թ է, ինչ է: Մի՞թե սա ճշմարտություն է: Եվ այս մարդը ապրել է մեր կողքին... ուրեմն մեր կողքին այսպիսի մարդիկ կան... Ու մենք չգիտենք: Տեղեկություն չունենք: Մենք զբաղված ենք, մենք գործ ենք անում: Մենք ժամանակ չունենք... Ոստնակներ ենք փնտրում տաքուկ տեղեր ցատկելու համար... Հաշվում ենք, հաշվում ենք, ամեն ինչ հաշվում ենք... Միայն թե մոռացել ենք, թե ինչի համար ենք հաշվում, ինչ ենք հաշվում... *(Կարդում է, հուզված է սաստիկ, ետ է ընկնում աթոռին, փակում է աչքերը: Մթության մեջ թեթևակի լուսավորվելով հայտնվում է Հայկ Մկրտչյանը, նստում է նրա դիմաց)*

ՊԱՏԿԵՐ ԶՈՐՐՈՐԴ

(Նույն տեսարանը: Արմենը բացում է աչքերը, զարմացած նայում է ծերունուն)

ԾԵՐՈՒՆԻ - Քնո՞վ անցար, տղաս:

ԱՐՄԵՆ - Չէ, չէ, մի վայրկյան... բայց ո՞վ եք դուք:

ԾԵՐՈՒՆԻ - Մի՞թե չճանաչեցիր:

ԱՐՄԵՆ - Ախ, հա, ես ձեզ մեր հիմնարկում եմ տեսել:

ԾԵՐՈՒՆԻ - Ճիշտ է:

ԱՐՄԵՆ - Ուրեմն եկել էիք բնակարանը փոխելու...

ԾԵՐՈՒՆԻ - Անխիղճ բան էր... Ես մենակ էի երեք սենյակի մեջ...

ԱՐՄԵՆ - Բա ինչո՞ւ չէիք ասում... ինչո՞ւ...

ԾԵՐՈՒՆԻ - Ասում էի՝ չէին լսում, տղաս... Դուք զբաղված մարդիկ եք, ներիք, իհարկե, բայց ես քեզ էլ ասացի մի անգամ...

ԱՐՄԵՆ - Չեմ լսել...

ԾԵՐՈՒՆԻ - Այդ է ... Բայց դա ոչինչ... Ինչպես դուք եք ասում՝ հարցն ինքնիքն լուծվեց... Ոչինչ, ոչինչ.. Ափսոս միայն, որ դառը նստվածք մնաց...

ԱՐՄԵՆ - Այն պատճառով, որ Ջանազանյանը չընդունեց ձեզ:

ԾԵՐՈՒՆԻ - Ոչ, այն պատճառով, թե ինչպես ընդունեց: Իմ աշխատանքն ինձ համբերություն էր սովորեցրել և մեծ համառություն: Ես ի վերջո մտա նրա առանձնասենյակը:

(Շրջվում է: Գրասեղանի ետևում նստած է Ջանազանյանը, խոսում է իր անթիվ հեռախոսներից մեկով)

Բարև ձեզ...

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - *(Հեռախոսով)* Հարցը շուտափույթ լուծում է պահանջում: Ես պարտավոր եմ արդարացնել աշխատավորների վստահությունը: Մի մոռացեք, որ յուրաքանչյուր նամակի ետևում մարդ է կանգնած, կենդանի, զգայուն անհատ իր հազար ու մի հոգսերով ու մտահոգություններով...

(Պաուզա)

ԾԵՐՈՒՆԻ - Բարև ձեզ... նստեմ, հա՞, տղաս... Ուրքերիս մեջ ուժ չկա...

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - Նախ և առաջ պետք է պետական մտածողություն ունենալ: Մենք տնայնագործներ չենք և մեզ համար ամենակարևորը երկրի շահերն են գլոբալ առումով: Մտածեք այդ մասին... *(Անջատում է: Խոսում է, այծռոխն ետ ընկած, կկոցած աչքերով)*

ԾԵՐՈՒՆԻ - Ես մի խնդրանքով եմ եկել:

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - *(Ինչ-որ կոճակ է սեղմում)* Ինչի՞ տեղդ վեր չես ընկնում, այ աղջի...

ԿԱՆԱՅԻ ԶԱՅՆ - Մի վայրկյանով ցած իջա, ընկեր Ջանազանյան... Բուժետում նարինջ էին ստացել...

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - Տեղդ մեկն ու մեկը թող շնթոկեր... Պարապ-սարապ քարշ եք գալիս... Բազար եք դարձրել ընդունարանը... Ամեն պատահական մարդ ներս է մտնում...

ԾԵՐՈՒՆԻ - Աղջիկը մեղավոր չէր, ընկեր Ջանազանյան, ամեն ինչ անում էր, որ ես ներս չմտնեմ:

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - Լավ, քեզ հետ հետո կխոսեմ: *(Մատր հեռացնում է կոճակից)*

ԾԵՐՈՒՆԻ - Ես իմ բնակարանի հարցով եմ եկել...

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - Ես բնակարանների հարցով չեմ զբաղվում... *(Վերցնում է գնզացող լսափողը)* Այո՞, այո, ընկեր Սիմոնյան, ինչպե՞ս թե... Միթե՞ ընդհանուր թիվը չեն հայտնել... Հիմա, հիմա կասեմ *(թղթեր է նայում)*

Փառահեղ անցավ, ընկեր Սիմոնյան, պարզապես համաժողովրդական խանդավառություն... Գրեք, երեք հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր տասներկու մարդ... Չափազանց հուզիչ տեսարան էր, չէին ուզում տուն գնալ... Ամեն ինչ՝ և տոնավաճառ և ցուցահանդես և ինքնագործունեություն... Շատ-շատ շնորհակալ եմ մեր համեստ աշխատանքը նկատելու համար... Դե մենք ինչ... մենք ծառաներ ենք: Ժողովուրդն է հիանալի, ստեղծագործ... փառահեղ ժողովուրդ ունենք, ընկեր Սիմոնյան... Շատ շնորհակալություն... *(անջատում է և սեղմում ինչ-որ կոճակ)* Ղարիբյան... կաշիդ կքերթեմ, Ղարիբյան... Այ տղա, ինչի՞ ընդհանուր թիվը չէիր հաղորդել: Հավի հիշողություն ունես, հավի... Մենակ աշխատավարձ ստանալը չես մոռանում... *(Շրջվում է դեպի ծերունին)*

Հայրիկ, քեզ հայերեն եմ ասում՝ ես բնակարանների հարցով չեմ զբաղվում... *(Սեղանի թղթերը տեղից տեղ է փոխադրում, բացում, փակում է դարակները)*

ԾԵՐՈՒՆԻ - Իմ խնդիրն ուրիշ է, ընկեր Ջանազանյան, ես միայնակ երեք սենյակում եմ ապրում...

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - Է, ապրեք, ձեզ ո՞վ է անհանգստացնում... Եթե բողոք ունեք, գրեք, ներկայացրեք գրավոր, կքննենք... *(վերցնում է գնզացող հեռախոսը: Ուրախացած)* Լսում եմ: Հենց հիմա... *(Բարձրանում է տեղից դեպի դուռն է գնում)*

ԾԵՐՈՒՆԻ - Ընկեր Ջանազանյան...

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - Չեմ կարող, ինձ վերև կանչեցին... Գրեք... ցուցակագրվեք ընդունելության... Անցեք այսպես մի շաբաթից... Պայքարեք, պաշտպանեք ձեր շահերը...

ԾԵՐՈՒՆԻ - *(Թուրքերեն ինչ-որ բան է ասում)*

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - Ի՞նչ, ի՞նչ...

ԾԵՐՈՒՆԻ - Թուրքերեն մի առած հիշեցի: Ասում է, լսելու համար միայն ականջը քիչ է... Թուրքերեն չգիտե՞ք...

ԶԱՆԱԶԱՆՅԱՆ - Ինձ միայն թուրքերենն էր պակաս...Թուրքերեն... անթասիր ժողովուրդ ենք, էլի... Տեսեք, այստեղ է եկել ու թուրքերեն է խոսում. իսկ ինչո՞ւ պետք է մենք թուրքերեն իմանանք...

ԾԵՐՈՒՆԻ - *(Գրեթե մեկուսի)* Այո, Իհարկե... Ինչո՞ւ պետք է իմանանք: Առանց թուրքերի էլ ապրում ենք...

(Գրասեղանի լույսն անջատվում է)

ԱՐՄԵՆ - Զարմանալի մարդ եք, ինչպե՞ս եք համբերել...

ԾԵՐՈՒՆԻ - Չէ, չէ, խնդիրը ես չեմ, տղաս... Ավելի շատ ցավ է՝ թե ինչու այդ Զանազանյան-մարդը չի սիրում իր նման մարդկանց: Ինչո՞ւ... ինչպես ինքն է հայտարարում, ամբողջ ժողովրդին սիրում է, իսկ դիմացի մարդուն չի սիրում... Չեմ հասկանում:

ԱՐՄԵՆ - Հայրիկ... իսկ ինչպե՞ս պատահեց, որ հայտնվեցիք Թուրքիայում:

ԾԵՐՈՒՆԻ - Ես Թուրքիայում չեմ հայտնվել, տղաս... Ես այնտեղ, Արևմտյան Հայաստանում եմ ծնվել: Ալաշկերտում: Լսած կա՞ս:

ԱՐՄԵՆ - Իհարկե:

ԾԵՐՈՒՆԻ - Ես երջանիկ եմ եղել մինչև 1915 թվական: Երջանիկ: Իհարկե, այդ ժամանակ չեմ հասկացել, ու միայն հետո եմ հիշել, որ լիակատար երջանիկ եմ եղել, տղաս: Հայր, մայր, մեծ ընտանիք... քեռիներ ու հորեղբայրներ...

ԱՐՄԵՆ - Մինչև եղեռնը...

ԾԵՐՈՒՆԻ - Այո... Այն ժամանակ արդեն հայրս, հորեղբայրներս, քաղաքի բոլոր տղամարդիկ թուրքական բանակ էին կանչված՝ ծառայության: Մնացել էին միայն կանայք, երեխաներն ու ծերերը: Բայց մեկ էլ մի գիշեր, մեր տանը հայտնվեցին հայրս ու հորեղբայրներս.

Շուտ արեք, հավաքեք ինչ ունեք-չունեք,-ասաց հայրս, թուրքերն ուզում են աքսորել մեզ:

Մենք չգիտեինք, թե ինչ բան է աքսորը, բայց լաց եղանք, որովհետև լաց էին լինում բոլորը: Հայրս սաստեց մեզ և լուրջությամբ հանկարծ պարզ հնչեց թուրք ոստիկանապետ Օսման բեկի ձայնը.

- Ուշացել ես, բժիշկ, ձեր տունը շրջապատված է: Որպես դասալիքների ես հրաման ունեմ ձերբակալել ձեզ: Հանձնվեք, հանուն օրենքի:

Այդ ինչ ահավոր լուրջություն էր: Այդ լուրջությունը երկար ժամանակ գնգում էր իմ ականջներում:

- Օսման բեկ,- ձայնեց հայրս,- ես քեզ մենակ մի բան եմ հիշեցնում. մորդ օրհնանքը, երբ ես փրկեցի նրա կյանքը և քո աղաչանքը՝ երբ որդուդ էի փրկում:

- Ես գիտեի, որ քո լավության տակից հուր-հավիտյան չեմ կարողանա դուրս գալ բժիշկ,—ծիծաղեց Օսման բեկը,—միակ ելքը քեզ սպանելն է:

Երևի նրա ուստիկաններն էին, քրքջացին բարձրաձայն:

- Մեզ երեխաներ են լսում, Օսման բեկ,- զարմանալի խաղաղությամբ ձայնեց հայրս,- պետք չէ, որ նրանց հիշողության մեջ քո խոսքերը մնան:

- Անհոգ մնա,- կրկին ծիծաղեց Օսման բեկը,- եղ մասին էլ կմտածենք:

Ես այլևս ասելու բան չունեմ,- եղբայրներին դարձավ հայրս:- Դուք ինչ եք ասում:

Հորեղբայրներս ուսերից իջեցրին հրացանները:

- Հայ մեռնենք,- ասաց մեծ հորեղբայրս:

- Որ մեր երեխեքը հայ ապրեն,- մազերս խառնեց փոքր հորեղբայրս:

- Դուք երեխաներին վերցրեք ու թոնրատան միջով դուրս պրծեք մի կերպ,- մորս ասաց հայրս:- Մենք նրանց ուշադրությունը այս կողմը կպահենք: Արագ...

- Ես ոչ մի տեղ չեմ գնա, կոտորվում ենք, միասին կոտորվենք,- լաց եղավ մայրս:

- Առանց քեզ մենք ո՞ւմ ենք պետք:

Հայրս միայն խիստ նայեց մորս...

- Երեխաներին փրկի,-ասաց ու շրջվեց, պատուհանի միջով մեկնեց հրացանը:

Ես թույլ ու շատ զգայուն տղա էի: Առաջին իսկ կրակոցներից ուշագնաց եմ եղել և դա էլ փրկել է ինձ:

ԱՐՄԵՆ - Քանի՞ տարեկան էիք, հայրիկ:

ԾԵՐՈՒՆԻ - Տասը տարեկան, տղաս, տասը տարեկան:

ԱՐՄԵՆ - Իմ փոքր տղան էլ հիմա տասը տարեկան է Եվ ամեն ինչ մանրամասն հիշում եք...

ԾԵՐՈՒՆԻ - Վաղուց իրավունք ունեմ մոռանալու: Ես իրավունք եմ ձեռք բերել մոռանալու, բայց չեմ մոռանում:

ԱՐՄԵՆ - Իրավո՞ւնք:

ԾԵՐՈՒՆԻ - Այո, մայրս ասաց՝ անիծված լինես, եթե մոռանաս, Հայկ... Անիծված լինես, եթե չլուծես մեր վրեժը:

ԱՐՄԵՆ - Ուրեմն երբ ուշքի եկաք, նա ո՞ղջ էր...

ԾԵՐՈՒՆԻ - Մարմնով ծածկել էր ինձ. կուրծքը կտրված էր ու դեռ արյուն էր թափվում ինձ վրա: «Անիծված լինես, եթե մոռանաս, Հայկ,- մրմնջաց... Անիծված լինես, եթե չլուծես մեր վրեժը»: Ու այլևս ոչինչ չխոսեց: Կարծես վերջին ուժերը պահել էր միայն այդ պատգամն անելու համար:

ԱՐՄԵՆ - Ու նորից ուշագնաց եղաք:

ԾԵՐՈՒՆԻ - Երևի... Որովհետև երբ արթնացա, մեր տանը զինվորներ կային... Ռուսական մի ջոկատ էր անցել մեր գյուղով, փրկել նրանց ովքեր մնացել էին ու տարել էջմիածին:

ԱՐՄԵՆ - Ու այնտեղ էլ հանդիպեցիք տիկին Շուշանիկին...

ԾԵՐՈՒՆԻ - Հա, հա, այդպես էր: Ուրեմն մեր խմբի հետ էր Շուշանիկը: Երեք տարեկան էլ չկար: Հենց առաջին օրը ինձ տեսավ թե չէ՝ «ապերիկ» ճչաց ու գիրկս ընկավ: Երևի ես նման եմ եղել նրա եղբորը: Իրար հետ էլ մեծացանք Ալեքսանդրապոլի որբանոցում... Բոլորն էլ կարծում էին, թե մենք իսկապես քույր ու եղբայր ենք... Հետո ինձ Երևան տեղափոխեցին՝ գյուղատնտեսական տեխնիկումում սովորելու: Իսկ ավարտելուց հետո խնդրեցի ինձ ուղարկել սահմանամերձ մի գյուղ՝ որպես այգեգործ: Եվ դաս էի տալիս միաժամանակ:

ԱՐՄԵՆ - Ի՞նչ էիք սովորեցնում:

ԾԵՐՈՒՆԻ - Հայ ժողովրդի պատմություն: Ու ավելի էի վարժվում թուրքերենի մեջ:

ԱՐՄԵՆ - Թուրքերենի՞ :

ԾԵՐՈՒՆԻ - Այո: Առանց այդ էլ ես գիտեի թուրքերեն՝ մեր գյուղում շատ թուրքեր կային և դպրոցում թուրքերեն էլ էինք անցնում...

ԱՐՄԵՆ - Քանի՞ տարեկան էիք, հայրիկ...

ԾԵՐՈՒՆԻ - Քսաներեք...

ԱՐՄԵՆ - Շուշանիկն ուրեմն արդեն տասնվեց տարեկան էր:

ԾԵՐՈՒՆԻ - Հա, տեքստիլ կոմբինատում էր աշխատում:

ԱՐՄԵՆ - Հաճա՞խ էիք հանդիպում:

ԾԵՐՈՒՆԻ - Երբ հնարավոր էր... Տարեկան մեկ-երկու անգամ: Դժվար ժամանակներ էին, տղաս...

ԱՐՄԵՆ - Իհարկե, ամայության մեջ նոր կյանք էիք կառուցում:

ԾԵՐՈՒՆԻ - Այո, մենք էլ սիրուն խոսքեր շատ էինք ասում, բայց աշխատում էինք... Եվ ճիշտ էր ամեն ինչ, բացի մի բանից: Ինձ դուր չէր գալիս, որ ոտքից գլուխ խրվել էինք գործի մեջ և լրիվ մոռացել, թե որտեղից ենք եկել... Ու ոնց ենք եկել... Ոչ մի ձայն: Կարծես չէին եղել ոչ ավերված, հրդեհված հայրենի շեներ, ոչ վրեժի կոչող անթաղ դիակներ... Ոչինչ... Ես կարծում էի, թե մենք ոտքի ենք կանգնելու, ամրապնդվելու ենք, որպեսզի ետ դառնանք նորից, տեր դառնանք մեր անտեր տներին... Բայց այդ մասին խոսել անգամ չէր կարելի: Ու ես կրկին անհուսորեն հիվանդացա...

ԱՐՄԵՆ - Ինչո՞վ:

ԾԵՐՈՒՆԻ - Հայրենաբաղձությամբ: Ամեն գիշեր տեսնում էի մեր տունը, մեր այգին: Ամեն գիշեր մայրս հայտնվում էր երազում. գալիս տխուր նստում էր իմ դիմաց, նայում խոժոռ հայացքով ու ասում. «Անիծված լինես, եթե մոռանաս, Հայկ... Անիծված լինես, եթե չլուծես մեր վրեժը»: Վեր էի թռչում սառը քրտինքի մեջ ու աչքիս առաջ նորից ու նորից հայտնվում էին՝ մորս թրատված կուրծքը, հայրս՝ պատուհանի մոտ հրացանազարկ ընկած, մեծ հորեղբայրս՝ դեմքին դաշույնի սոսկալի հարված: Փոքր եղբայրս՝ սրախողոդ: Փոքրիկ, շեկլիկ քույրիկիս՝ գետնահողը ջղաձգված բռունցքների մեջ, հա, բայց քույրիկիս ինչո՞ւ էին սպանել... Չէ, բայց այդ գառնուկին ինչու էին սպանել...

ԱՐՄԵՆ - Բավական է, խնդրում եմ...

ԾԵՐՈՒՆԻ - Մի անգամ չէք կարողանում լսել... իսկ ես տեսնում էի ամեն օր, ամեն օր, ամեն գիշեր, հենց որ փակում էի աչքերս... Ու ի վերջո կայացրի իմ վճիռը...

ԱՐՄԵՆ - Խոստովանեք, որ վճիռը վաղուց էր կայացված... և սահմանամերձ գյուղը պատահականություն չէր...

ԾԵՐՈՒՆԻ - Խոստովանում եմ... խոստովանում եմ... Ես ապրել չէի կարողանում: Ամեն ինչ նախապատրաստել էի... Նույնիսկ թլպատվել էի մահմեդական բոլոր կանոններով... թուրքական դրամ էի ձեռք քերել ու փաստաթղթեր... Ընդամենը քսաներեք տարի ապրեցի իբրև Հայկ Մկրտչյան, այսուհետև դառնալու էի թուրք, դառնալու էի Քյարամ Ալիօղլի... Ինձ միայն մի հարց էր տանջում. ինչ պիտի ասեմ Շուշանիկին: Գուցե հեռանամ առանց հրաժեշտ տալու ... Եվ երբ վճռեցի, որ չեմ տեսնելու և գիտեի՝ անցնելու եմ սահմանը, հանկարծ հրաշքի նման հայտնվեց Շուշանիկը:

(Մենյակի ետին հատվածը լուսավորվում է: Նստած է ջահել Հայկ Մկրտչյանը: Ներս է ընկնում դեռատի Շուշանիկը)

ՇՈՒՇԱՆԻԿ - Անխիդճ, և դու կարող էիր հեռանալ առանց ինձ տեսնելո՞ւ

ՀԱՅԿ - Շուշանիկ, հանգստացիր, ինչեր ես խոսում... Ո՞ւր պետք է գնամ...

ՇՈՒՇԱՆԻԿ - Մի խաբիր, Հայկ, Հայկ ջան, բա ինչո՞ւ էիր բոլոր գրքերդ ինձ ուղարկել... Հենց որ ընկերդ բերեց, ես անմիջապես հասկացա, որ հեռանում ես: Ո՞ւր ես գնում, ախպեր ջան...

ՀԱՅԿ - Տուն:

ՇՈՒՇԱՆԻԿ - Տո՞ւն: Խելագարվե՞լ ես:

ՀԱՅԿ - Էլ չեմ դիմանում... Մայրս կանչում է, Շուշանիկ, մայրս ամեն գիշեր կանչում է ինձ... նախատում է ...

ՇՈՒՇԱՆԻԿ - Հա, բայց ինչի՞ համար... գնում ես ի՞նչ անես...

ՀԱՅԿ - Եթե կարողանամ՝ կգտնեմ ու կսպանեմ Օսման բեկին:

ՇՈՒՇԱՆԻԿ - Եվ դա կդառնա հարցի լուծո՞ւմ: Մի ամբողջ ժողովրդի դիմաց մի Օսման բե՞կ...

ՀԱՅԿ - Որպեսզի կարողանամ քնել, Շուշանիկ:

ՇՈՒՇԱՆԻԿ - Բա ինձ ո՞ւմ ես թողնում, Հայկ...

ՀԱՅԿ - Քե՞զ ինչ է պատահել...

ՇՈՒՇԱՆԻԿ - Ոչինչ: Ուրեմն ես քեզ համար ոչ մի նշանակություն չունե՞մ:

ՀԱՅԿ - Ես քո վրեժն էլ եմ լուծելու, Շուշանիկ ջան: Ես քո ծնողներին, ինձ շատ նման քո եղբոր սպանողներին էլ եմ գտնելու, քույրիկ ջան: Ես գնում եմ, որ այլևս ետ չգամ...

ՇՈՒՇԱՆԻԿ - Ու դու ինձ բոլորովին չե՞ս խղճում, հա...

ՀԱՅԿ - Տեսնում ես, որ ես ինձ էլ բոլորովին չեմ խղճում...

ՇՈՒՇԱՆԻԿ - Ես ի՞նչ անեմ, տեր աստված... Հազար տարի անցներ, չէի ասի, բայց դու ինքդ ես ստիպում ինձ... Հայկ ջան, ախր դու ինձ համար հո միայն եղբայր չես... դու... դու իմ կյանքն ես, Հայկ... Ես սիրում եմ քեզ, սիրում եմ, Հայկ, խելագարվում եմ քեզ համար: Մի գնա, ինձ մենակ մի թող, հոգի ջան... մեղք եմ, չե՞, ես ի՞նչ կյանք եմ տեսել... Ես նոր եմ ապրելու և դու ուզում ես ինձ զրկել կյանքից: Արար աշխարհում իմ հարազատը միայն դու ես... Հայկ ջան... Մի հեռանա, կամ ինձ էլ հետդ տար: Ուր ուզում ես տար, ինչ ուզում ես արա... միայն թե ինձ նորից մենակ մի թող աշխարհում...

ՀԱՅԿ - Նստիր, նստիր ու լսիր ինձ, Շուշանիկ... Ուշադիր լսիր... Ինձ վրա անե՞ծք կա, դու լավ գիտես, մորս անե՞ծքը: Եվ ես ուխտ եմ արել: Ես պիտի գնամ: Դու գիտե՞ս ինչ բան է ֆիդային.

ՇՈՒՇԱՆԻԿ - Գիտեմ...

ՀԱՅԿ - Ես ֆիդայի եմ: Ուրեմն իրավունք չունեմ ընտանիք ունենալու: Որովհետև եթե ֆիդայի եմ, ուրեմն իմ ընտանիքը ժողովուրդն է: Եվ աշխարհում ոչ ոք, ոչ մի մարդ իրավունք չունի գրավելու նրա տեղը:

ՇՈՒՇԱՆԻԿ - Ես գիտեի, ես գիտեի, որ դու ինձ չես սիրում...

ՀԱՅԿ - Եթե քեզ համար այդպես ավելի հեշտ է, համարի այդպես...

ՇՈՒՇԱՆԻԿ - Եթե դու մազաչափ իսկ սիրեիր ինձ, չէիր գնա...

ՀԱՅԿ - Ես հակառակը կասեի... Եթե չգնայի չէի հարգի ինձ ու արժանի չէի լինի քո սիրուն:

ՇՈՒՇԱՆԻԿ - Բայց ինչո՞ւ դու, ինչո՞ւ անպայման դու... Միայն քո՞ ծնողներն են զոհվել... Ո՞վ է որ զոհեր չի թողել այնտեղ: Ինչո՞ւ մյուսներն ապրում են, աշխատում են, նոր տուն են սարքում իրենց համար, երեխաներ են ունենում... Եվ միայն դու...

ՀԱՅԿ - Ի՞նչ գիտես, Շուշանիկ, գուցե ճիշտ նման մի վեճ էլ հիմա տասնյակ տներում է տեղի ունենում:

ՇՈՒՇԱՆԻԿ - Չէ մի... բոլորը մոռացել են... Չե՞ս տեսնում: Հիմա ո՞վ է հիշում 15 թիվը:

ՀԱՅԿ - Ձևացնում են, թե մոռացել են: Դա մոռանալ չի լինի... Եվ վերջապես ես... ես չեմ ուզում մոռանալ, դա իմ ճակատի գիրն է:

ՇՈՒՇԱՆԻԿ - Ամեն մարդ ինքն է գրում իր ճակատի գիրը:

ՀԱՅԿ - Ճիշտ է, սիրելիս... Եվ այլևս ոչ մի խոսք... Ես չեմ ուզում քեզ հիշել խոռված աչքերով... Գնաս բարով ասա ինձ, Շուշանիկ:

ՇՈՒՇԱՆԻԿ - Ես կսպասեմ քեզ:

ՀԱՅԿ - Եվ կսխալվես: Ես փաստորեն փախչում եմ այստեղից և արդեն ետդարձի ճանապարհ չունեմ:

ՇՈՒՇԱՆԻԿ - Ես կսպասեմ քեզ:

ՀԱՅԿ - Իզուր... Անմտություն... ամուսնացիր, շատ-շատ երեխաներ ունեցիր, քույրիկս... դու էլ դրանով հանիր վրեժդ, քո ամեն մի զոհված հարազատի փոխարեն մի զավակ... միթե՞ դա գեղեցիկ վրեժ չէ... Դե եկ, եկ համբուրեմ քեզ ու գնա, սիրելի աղջիկ...

ՇՈՒՇԱՆԻԿ - Չեմ ուզում...

ՀԱՅԿ - Շուշանիկ...

ՇՈՒՇԱՆԻԿ - Չեմ ուզում... (Նետվում է տղայի պարանոցին, գրկում ու համբուրում է արագ-արագ) Չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում...

(Լույսը մարում է ետնամասում)

ԾԵՐՈՒՆԻ - Այդպես էր...

ԱՐՄԵՆ - Ու ձեզ հաջողվեց գտնել Օսման բեկին:

ԾԵՐՈՒՆԻ - Ուղիղ մի տարի անց, Անկարայում:

ԱՐՄԵՆ - Իսկ տունը, ձեր տունը... գտա՞ք...

ԾԵՐՈՒՆԻ - Գտա: Քրդեր էին ապրում...

ԱՐՄԵՆ - Ոչ մի հայ չկա՞ր:

ԾԵՐՈՒՆԻ - Հա՞յ... Այգեգործի իմ վկայականը ինձ ազատություն էր տալիս և հնարավորություն գրուցելու մարդկանց հետ: Առանց դժվարության իմացա, որ հենց նույն թվականին, երևի հայրենիքին մատուցած մեծ ծառայությունների համար, Օսման բեկը հրավիրվել է ռազմական նախարարություն՝ պատասխանատու աշխատանքի: Ու ես էլ շտապեցի Անկարա, համեստ մի սենյակ վարձեցի և աշխատանքի անցա որպես մատուցող փոքրիկ ու շքեղ մի ռեստորանում, որ ուղիղ ռազմական նախարարության շենքի դիմաց էր գտնվում և որտեղ սովորաբար ճաշում էին նախարարության աշխատողները: Կամաց-կամաց համբերությամբ սկսեցի տեղեկություններ հավաքել և ապրեցի առաջին ամենամեծ հուսախաբությունը: Օսման բեկը Անկարայում չէր՝ Լեռնային Քրդստանում ընդվզումներ էին բռնկվել ու նա կանոնավոր բանակով մեկնել էր խաղաղեցնելու տեղացիներին:

Ուրիշ էլք չկար: Սպասել էր պետք: Եվ ես սպասեցի չորս երկար ու ձիգ ամիսներ... Իհարկե օրերս պարապ չէին անցնում: Իմացա այն ամենն ինչ ինձ պետք էր... Որ նա երկու տուն ունի՝ մեկը Հանրապետության փողոցի վրա, որտեղ ընտանիքն էր ապրում, իսկ մյուսը Գետափին, որտեղ կիրակի օրերը հանգստանում էր իր այգում: Ես իմ գործի մեջ այնքան էի վարպետացել և այնպիսի ջանասիրություն էի հանդես բերում, որ բոլորվին էլ չգարմացա, երբ ռեստորանի տերը մի օր ինձ առաջարկեց սպասարկել նախարարության աշխատողներին: Եվ այնտեղ էլ տեսա նրան: Ավելի շուտ ճանաչեցի ձայնից: Ես ինչպե՞ս կարող էի մոռանալ այդ ձայնը... Ես այնքան երջանիկ էի ու այնքան խանդավառված էի աշխատում, որ աչքի ընկա: Դրանից հետո Օսման բեկը պահանջում էր, որ միայն ես սպասարկեմ իրեն: Ես հարյուր անգամ կարող էի սպանել նրան, բայց հիմա, երբ նա իմ ձեռքին էր, չէի ուզում շտապել: Ոչ թե այն պատճառով, որ իհարկե տեղն ու տեղը կբռնեին ինձ: Չէ, այդ մասին ես չէի մտածում: Ես շատ էի սպասել այս օրվան, տասնչորս տարի, տասնչորս անգամ երեք հարյուր վաթսուներեք անքուն, տառապալից գիշերներ: Եվ հիմա մի կրակոցով վե՞րջ: Ուրեմն նա՞ դահիճը մի վայրկյան էլ չտառապի: Ուրեմն նույնիսկ չիմանա՞, թե ով և ինչի համար է սպանում իրեն: Չէ, մինչև չխոսեմ, մինչև չբացատրեմ, մինչև նա չողդա

սարսափից, չեմ սպանի: Այդքան համբերել եմ, էլի կհամբերեմ: Ու համբերեցի: Այնքան, որ մի օր ինքը դիմեց ինձ.

- Տղա,- ասաց նա,- դու կարծես թե մատուցող ծնված լինես: Կեցցես:

Ես շատ էի սպասել այդ առիթին:

-Օսման բեկ,- ասացի,- սա ի՞նչ գործ է որ... Ես արյունով, կրթությամբ այգեգործ եմ .. ու դրա մեջ է իմ շնորհքը: Բայց ի՞նչ անեմ, գործ չկա...

Օսման բեկը չթաքցրեց ուրախությունը...

- Այգեգործ... Խնձորները որդը ուտում է ... բա ինչո՞ւ ձայն չէիր հանում, այ տղա:

- Ձեզ ծառա,- ասացի ես:- Մի օրում վերջացնեմ... Դեղեր, սրսկիչ ունե՞ք:

- Ամեն ինչ: Կիրակի օրը կգամ այս հասցեով:

Ես գիտեի, որ նրա այգեգործը, որ նաև տան պահակն էր, մի ամիս առաջ հիվանդացել էր և կիրակի օրը վստահ գնացի Գետափ: Գնացի, այգիները մտա՝ կարոտից գլուխս պտտվեց: Մոռացա ամեն ինչ, սկսեցի աշխատել: Դեռ կեսօր չկար, ավարտեցի գործս, ձեռքերս էի լվանում, երբ Օսման բեկը եկավ, նայեց չորս կողմը, լեզվով ծլթացրեց հիացմունքով ու նստեց մի կոտրած կոճղի:

(Ետնամասում լույս: Ջահել Հայկն է: Իսկ կոճղին նստած է Օսման բեկը)

ՕՍՄԱՆ - Հափերիմ, աֆերիմ... իսկական վարպետ ես, Քյարամ...

ՀԱՅԿ - Ասում էի՝ չէ... Խելքս գնում է այգիների համար, Օսման բեկ, ի՞նչ անեմ, որ չեն թողնում աշխատել:

ՕՍՄԱՆ - Չեն թողնո՞ւմ: Ո՞վ չի թողնում: Չե՞ն թողնում, թե տեղ չկա:

ՀԱՅԿ - Չէ, հենց իմ հայրը, մեծ այգի ուներ, իլեցին ձեռքից... Լիներ՝ դուրս չէի գա այգուց: Ինչ այգի էր, գիտե՞ք, ձեր խնձորներից էլ ուներ:

ՕՍՄԱՆ - Ո՞վ իլեց: Դու էլ նրանից իլի...

ՀԱՅԿ - Է, հո մենակ այգին չէ... Հայրս մեծ մասնագետ էր... բայց նրան էլ չթողեցին իր գործն անելու:

ՕՍՄԱՆ - Առականքով ես խոսում, այ տղա, թե ես չեմ հասկանում: Ի՞նչ գործի տեր էր հայրդ:

ՀԱՅԿ - Բժիշկ էր:

ՕՍՄԱՆ - Բժիշկ: Որտե՞ղ:

ՀԱՅԿ - Ալաշկերտում:

ՕՍՄԱՆ - Ալաշկերտո՞ւմ... *(ծիծաղում է)* Ինչո՞ւ ես սուտ խոսում, Քյարամ:

ՀԱՅԿ - Սուտ չեմ խոսում, ալլահը վկա:

ՕՍՄԱՆ - Տո լակոտ, դեռ աստծուն էլ սուտ վկա՞ ես բերում: Ես չգիտե՞մ, թե ինչ կար-չկար Ալաշկերտում, երբ ինքս էլ աշկերացի եմ և տասը տարի քաղաքի ոստիկանապետն եմ եղել:

ՀԱՅԿ - Մի բարկացիր, Օսման բեկ... Հաստատ սուտ չեմ ասում... բա որ բժիշկ չկար, ո՞վ էր ձեր հիվանդներին բուժում:

ՕՍՄԱՆ - Ով էր, ով էր, մի հայ կար, նա էր բուժում...

ՀԱՅԿ - Դե ես էլ հենց այդ հայի տղան եմ:

ՕՍՄԱՆ - Դո՞ւ... դա՞ ինչ հիմար կատակ է, լակոտ...

(Հայկը գոտկատեղից հանում է ատրճանակը)

ՀԱՅԿ - Տեղիցդ չշարժվես, Օսման բեկ, թե չէ ուղեղդ հենց հիմա ցրիվ կտամ. նստիր ու լսիր: Ու մի դողա, տղամարդ եղիր... քանի՞ հայի ճակատին ես էսպես պահել քո ատրճանակը: Մի դողա, լսիր: Հիշո՞ւմ ես, երբ շրջապատել էիր մեր տունն ու հայիոյում էիր, ծաղրում էիր հորս, հայրս ասաց. «Մեզ երեխաներ են լսում, Օսման բեկ... Պետք չէ, որ նրանց հիշողության մեջ մնան քո խոսքերը»: Ինչո՞ւ ծիծաղեցիր եղ խոսքերի վրա...

ՕՍՄԱՆ - Ալլահ, ալլահ, ես ի՞նչ երկնային պատիժ էր:

ՀԱՅԿ - Հիշո՞ւմ ես, դու հորս ասացիր, որ նրան սպանելու ես հենց միայն այն պատճառով, որ չես կարողանում նրա լավության տակից դուրս գալ... Չէ՞ որ նա էր փրկել քո մորն ու որդուն...

ՕՍՄԱՆ - Բայց դո՞ւ որտեղ էիր, դո՞ւ... էդ տանը կենդանի շունչ չկար, դժողքի ծնունդ...

ՀԱՅԿ - Կային... մայրս իր մարմնով ծածկել էր ինձ, բեկ, ու մեռնելիս գիտե՞ս ինչ ասաց. «Անիծված լինես, եթե մոռանաս, Հայկ... Անիծված լինես, եթե չառնես մեր վրեժը...»

ՕՍՄԱՆ - *(ծնկի է իջնում)* Խնայիր, ի սեր ձեր աստծո, խնայիր, մարդ... Մենք մոլորված ենք եղել, մեզ ստիպել են... Մենք մոռացել ենք, դուք էլ մոռացեք, հարևան մարդիկ ենք, հերիք է արյուն թափենք... Ասա, ինչ ես ուզում, արյան վարձ, ինչ ուզում ես, ինչքա՞ն ես ուզում: Չէ չկա: Խնայիր... ոտքդ համբուրեմ...

ՀԱՅԿ - Օխա՛յ... Հովազավ սիրտս... Տասնչորս տարի էս օրն էի երագում, Օսման բեկ, տասնչորս տարի, ամեն օր... Ու հիմա, ճիշտը որ ասեմ՝ դու էնքան ողորմելի ես, որ զգվում եմ, չեմ էլ ուզում սպանել քեզ...

ՕՍՄԱՆ - Ողորմա, խնայիր, լավությունն արա...

ՀԱՅԿ - Քե՞զ, լավությո՞ւն, Օսման բեկ, որ հիմա էլ ի՞նձ սպանես... ինչպես հորս...

ՕՍՄԱՆ - Ալլահը վկա, ոսկու մեջ կթաղեմ քեզ...

ՀԱՅԿ - Ա՛յ, դրան հավատում եմ, որ կթաղես... դրա համար էլ ավելի լավ է՝ ես թաղեմ քեզ... մեղք եմ, մորս անեծքի տակ տասնչորս տարի չեմ քնել, Օսման բեկ: Այս գիշեր ուզում եմ քնել հանգիստ... Վերջացրինք...

(Լույսը մարում է)

ԱՐՄԵՆ - Ինչ զարհուրելի պատմություն...

ԾԵՐՈՒՆԻ - Երանի այդ օրվան: Ես իրավունք ստացա ապրելու:

ԱՐՄԵՆ - Այո, այո, իհարկե, և ոչ միայն դուք, ոչ միայն դուք, հայրիկ...

ԾԵՐՈՒՆԻ - Թեև ճիշտը որ ասեմ՝ դրանից հետո ինձ լրիվ դատարկված զգացի: Քանի որ մտածում էի, թե զուտ անձնական վրեժ եմ լուծել: Ճիշտ էր ասում Շուշանիկը՝ ամբողջ եղեռնի դիմաց՝ մի Օսման բեկ: Հայրենիք վերադառնալու մասին անմտություն էր երագելը: Եվ ես որոշեցի հայրենիքին օգտակար լինել այստեղ, իմ փրկարար ռուսներին օգտակար լինել այստեղ: Եթե նրանց ջոկատը չանցներ մեր գյուղով... Մի խոսքով սրեցի ականջներս... մատուցողը Թուրքիայում ոնց որ շուն, նրան հաշվի չեն առնում և հարբած պաշտոնյաները ինչի մասին ասես խոսում էին իմ ներկայությամբ: Թվեր ու փաստեր էին բերում, գործողությունների ծրագրեր քննարկում: Իսկ ես լսում, կուտակում էի... Ու մի օր էլ զանգահարեցի սովետական դեսպանատուն...

ԱՐՄԵՆ - Ձեզ, իհարկե չհավատացին...

ԾԵՐՈՒՆԻ - Սկզբում չէին հավատում և դա շատ ցավալի էր: Ես վտանգի էի ենթարկում իմ կյանքը, իսկ նրանք չէին հավատում: Ստիպված միայն տեղեկությունն էի հայտնում և անջատում անմիջապես: Երևի ի վերջո ստուգեցին իմ լուրերը, որովհետև դեսպանատան աշխատակիցը մի անգամ ասաց.

- Այլևս հեռախոսով չխոսեք, ձեզ կարող են լսել: Մենք գիտենք, թե որտեղից եք զանգահարում և կգտնենք ձեզ:

Նա ինձ նշանաբան ասաց, և մի շաբաթ անց մենք հանդիպեցինք :

ԱՐՄԵՆ - Դա 1932 թվականին էր:

ԾԵՐՈՒՆԻ - Այո... Դրանից հետո ուղիղ քառասուն տարի ես աշխատել եմ իմ հայրենիքի համար, օգնել եմ, որքան կարողացել եմ... որքան կարող էր օգնել ռազմական նախարարության շրջանում աշխատող մատուցողը և մետրոդոսները...

ԱՐՄԵՆ - Ներեցեք, իհարկե, ձեզ վճարո՞ւմ էին:

ԾԵՐՈՒՆԻ - Ոչ: Ես հենց սկզբից հայտարարեցի, որ ինձ ոչինչ պետք չէ, որովհետև ես վարձկան չեմ: Իսկ մարդ, եթե գործ է անում իր տան համար, նրան ի՞նչ վճար: Հենց նույն նկատառումներով էլ հրաժարվեցի ամեն տեսակ կոչումներից ու շքանշաններից: Կարևորն այն էր, որ իմ աշխատանքը գնահատվում էր, որ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ այն պետք էր իմ հայրենիքին, որից ես ակամա հեռացել էի...

ԱՐՄԵՆ - Ինչ սարսափելի է ապրել օտար երկրում, մենակ...

ԾԵՐՈՒՆԻ - Սարսափելին դա չէ... սարսափելին այն էր... որ ես քառասուններկու տարի հայերեն միայն իմ մտքում եմ խոսել, իսկ բարձրաձայն ինձ թույլ եմ տվել միայն առանձնության մեջ, ծովափին կամ որևէ ամալի տեղ: Ես միայն հայերենի կարոտից էի մեռնում, խելագարվում, տղաս... Ու մտքովդ էլ չի անցնի, որ գիշերները թաքուն, արցունքն աչքերիս էի լսում Հայաստանի ռադիոյի ամենասովորական հաղորդումներն անգամ և նույնիսկ այն, որ այսինչ գյուղում սկսվել է խաղողի բերքահավաքը:

ԱՐՄԵՆ - Չէի՞ք ուզում հայրենիք վերադառնալ, հայրիկ:

ԾԵՐՈՒՆԻ - Չէի՞ք ուզում... Չէի՞ք ուզում... Ես ամեն ինչով աշխատում էի արժանանալ դրան, տղաս և արժանացա... Ու երբ իմ բարեկամների առաջարկով, Ռուսիայի վրայով Մոսկվա և ապա Հայաստան եկա... Ու երբ տեսա, թե ինչ է դարձել Հայաստանը, երեխայի նման հոնգուր-հոնգուր լաց եղա, տղաս... և հպարտացա, որ իմ կյանքի, իմ աշխատանքի մասնիկն էլ կա այն ամենի մեջ, ինչ կառուցել էք դուք:

ԱՐՄԵՆ - Եվ Շուշանիկը սպասում էր ձեզ...

ԾԵՐՈՒՆԻ - Շուշանիկը... Իհարկե սպասում էր ինձ, իմ փոքրիկ Շուշանիկը, իր չորս զավակներով, հարս ու փեսաներով և տասներկու թոռներով... Ես թույլատվություն ունեի և բարեկամների օգնությամբ տարեկան մեկ նամակ էի ուղարկում նրան, իսկ հետո արդեն նրա զավակներին... ազնիվ, աշխատավոր մարդիկ են և ես հանգիստ կհեռանամ այս աշխարհից, իմանալով, որ նրանք են ինձ վերջին ճանապարհը տանելու, որ իմ ետևից նրանք են գալու... Չէ՞ որ ինձ այստեղ ոչ ոք չի ճանաչում, իմ հին կապավոր բարեկամ Վահրամից և նրանցից բացի:

ԱՐՄԵՆ - Երբևէ վախեցե՞լ էք մահից...

ԾԵՐՈՒՆԻ - Այնտեղ, վերջին տարիներին՝ շատ... Սարսափում էի, որ կմեռնեմ մենակության մեջ, ու ինձ կթաղեն որպես թուրքի և իմ արյունակիցներից ոչ ոք կողքիս չի լինի: Դա

անողորք սխալ կլինեք, և աստված խնայեց ինձ: Իսկ հիմա ինչի՞ց վախենամ, ինչո՞ւ վախենամ: Ես իմ կյանքը լիուլի ապրել եմ և ապրել եմ մարդավարի: Ու թեև նվաստացել ու խոնարհվել եմ օտարների առաջ՝ միայն նրա համար, որ իմ հայրենիքը բարձրանա: Ու այլևս մենակ չեմ... և իմ ետևից եկողներ կան և դա թող լինի իմ առաջին ու վերջին փառասիրությունը, որովհետև ճիշտ է ասել բանաստեղծը.

*«Եվ մահամերձն ալ կուգե երկու բան,
նախ՝ կյանք, ետք՝ լացող սը իր վրան»:*

Ես հոգնեցի, կներես, տղաս...

(Լույսը մարում է: Անհետանում է ձերունին)

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Նույն տեսարանը: Արմենը ցնցվում է ու բացում աչքերը: Ոչ ոք չկա: Բաց դռնից մեղմ լսվում է «Իմ Հայաստան» երգը: Հայտնվում է Շուշանիկը)

ՇՈՒՇԱՆԻԿ - Որևէ բան հասկացա՞ք, տղաս:

ԱՐՄԵՆ - Հասկացա... ինձ թվում է, հասկացա, տիկին Շուշանիկ:

ՇՈՒՇԱՆԻԿ - *(նամակները ցույց տալով)* Եվ նույն կարծիքի՞ն եք:

ԱՐՄԵՆ - Առավել ևս... Ես ուզում եմ իմ որդիները ևս կարդան դրանք, տիկին Շուշանիկ, և իմ բարեկամները, հարևանները, բոլորը... Ես ուզում եմ, որ նրանք բոլորը վաղը գան, այդ զարմանալի մարդու հուղարկավորությանը: Որ բոլորը քայլեն նրա ետևից...

ՇՈՒՇԱՆԻԿ - Պետք չէ: Աղմուկ պետք չէ, տղաս: Իրարանցում պետք չէ: Ողջ կյանքում նա մնաց նույն համեստ, անփառասեր մարդը... Տասնվեց տարի ապրեց այստեղ, գրեթե մենակ ու շարունակում էր զարմանքով ու հիացմունքով նայել մեր աշխարհին: Եվ շարունակ զարմանում և ուրախանում էր, որ դժգոհներ կան: «Այս ի՞նչ փնթփնթան ժողովուրդ ենք, - ասում էր: Յաթադանից ու սովամահ լինելուց հազիվ ենք փրկվել, ապրում ենք մարդավարի, շնչելու նման ազատ հայերեն ենք խոսում ու հայերեն էլ փնթփնթում, տրտնջում ենք անվերջ: Այս ի՞նչ է՝ ճանապարհներն անբարեկարգ են, այս ի՞նչ է՝ ապրանքը գեղեցիկ չեն փաթեթավորում, այս ի՞նչ է՝ լավ չի աշխատում հեռախոսը: Հեռախոսը... Բայց դու գիտե՞ս, որ դա լավ է, դա հրաշալի է, Շուշանիկ: Եթե մարդ փնթփնթում է ուրեմն վստահ է իր անցնելիք երկար ճանապարհի վրա... Ուրեմն ապրում է ժողովուրդը:

Միայն թե ասում էր, մանրուքով չտարվեն, իրապաշտ չդառնան ու չմոռանան կարևորը... Չմոռանան, թե ինչ են թողնելու իրենցից հետո եկողներին: Արտասովոր մարդ էր...

ԱՐՄԵՆ - Այո:

ՇՈՒՇԱՆԻԿ - Եվ ուրեմն մի աշխատեք հանդիսություն սարքել... որ շատ մարդիկ լինեն և այլն... Չհամոզվեցի՞ք, որ դա նրան դուր չէր գա, տղաս...

ԱՐՄԵՆ - Այդպես չէ: Նա քիչ առաջ ինձ ասաց, որ չէր ցանկանա մենակ լինել այդ պահին և նույնիսկ Դուրյան արտասանեց:

ՇՈՒՇԱՆԻԿ - (Ապշած) Ո՞վ, ով ասաց.

ԱՐՄԵՆ - Ո՞վ... նա, Հայկ Մկրտչյանը...

ՇՈՒՇԱՆԻԿ - Դու հոգնած ես, տղաս, գուցե քնես մի քիչ: Բարի գիշեր:

ԱՐՄԵՆ - Ճիշտ է, ճիշտ է, բարի գիշեր, տիկին Շուշանիկ:

(Շուշանիկը դուրս է գալիս: Արմենը նետվում է դեպի հեռախոսը: Հավաքում է համարը)

Ծով... ես եմ, Ծովիկ... Տղաներս ո՞նց են... ինչո՞ւ, ժամը քանի՞սն է ... ի՞նչ ես ասում... Ե՛ս... էլի գովեցի՞ր... Խմելի՞ք որտեղից... Հարբա՞ծ եմ... Ե՛ս... Ճիշտ է, հարբած եմ, Ծովիկ, բայց ուրիշ տեսակ... Ծովիկ, ես հենց նոր կարդացի նրա նամակները... Հանգուցյալի, ո՞ւմ... Ծովիկ, դու գիտե՞ս... մենք սխալ ենք ապրում: Ես նոր հասկացա... Եվ ճշմարիտը դու ես... ինչ որ ասում էիր այսօր... Հենց ոստնակի հարցում... հենց երեխաների հարցում... Ես ուզում եմ, որ նրանք... մի օր առանց ամաչելու գան իմ ետևից... էհ... ժամն ի՞նչ կարևոր է, Ծովիկ... Եվ դու վաղը տղաներիս հետ պետք է այստեղ լինես... Ամենայն լրջությամբ: Ես քեզ ամեն ինչ կբացատրեմ... Մենք պետք է գնանք նրա ետևից... Իսկական մարդ է մեռել: Լսո՞ւմ ես, դու ինձ լսո՞ւմ ես, Ծով... նրա ետևից մենք պիտի գնանք: Բարի գիշեր, Ծովիկ:

(Հավաքում է մեկ ուրիշ համար)

Կարե՞ն: Քնած հո չէիր: Դե ես գիտեի, որ չղջիկ ես... Կարեն ջան մի բան եմ խնդրելու: Վաղն ի՞նչ ես անում: Չգիտեմ, ինչ ուզում ես արա, բայց ուզում եմ, որ ժամը երեքին Կիևյան կամուրջի մոտ լինես... Գործ կա... Շատ, շատ կարևոր գործ... Ես սպասում եմ քեզ, ես ուզում եմ քեզ ծանոթացնել մի մարդու հետ... Հետո ուշ կլինի... Հետո դա անհնարին կլինի, Կարեն... Ես կդիմավորեմ քեզ:

(Հավաքում է այլ համար, երկար սպասում է)

Բարև... Արշակ... վախենալու ի՞նչ կա... ի՞նչ խաշ, այ տղա, ամառ է ... Ընկերության մասին քո պատկերացումները սխալ են: Մի իմաստուն ասել է, որ ընկերությունը

շուրջօրյա պետք է լինի և ոչ թե միայն ցերեկը... Համբերում եմ... Վերջացրու
բառապաշարդ: Հանգստացա՞ր... Իսկ հիմա լսիր... Ես զբաղված եմ, չեմ կարող, բայց
առավոտյան զանգիր մեր կուրսեցիներին, բոլորին, ում կարող ես: Թող ժամը երեքին
հավաքվեն Կիևյան կամրջի մոտ: Թաղում է, Արշակ, ու մենք՝ բոլորս պիտի ներկա
լինենք... Առաջին անգամն է, որ քեզ թաղմա՞ն են հրավիրում... Ու թող վերջին անգամ
լինի, ախպերս, բայց պետք է գաք: Մե՞ր... դասախոսից էլ բարձր է, Արշակ ջան...
Հարազատ է ... գուցե և իմ ամենահարազատը: Ուրեմն, սպասում եմ...

(Ուզում է մեկին էլ զանգահարել: Նույնիսկ հավաքում է համարը, հետո անջատում) Ձե, թող
նա չգա... նա արժանի չէ...

*(Շարունակում է հուզված քայլել սենյակի ցաքուցրիվ աթոռների միջով: Ու ցնցվում հանկարծ՝
լացի ձայն լսելով: Կողքի սենյակում երեխա է արթնացել, լսվում է մոր ձայնը)*

ՄՈՐ ՁԱՅՆԸ - Քնի, ցավդ տանեմ, դեռ շուտ է ... Քնի, արևիդ մեռնեմ... Բայ, բայ, բայ, բայ...

ԿՆՈՋ ՁԱՅՆ - Թորգոմ ջան, մինչև մի կտոր բան չուտես, չեմ թողնի գնաս... Ստամոքսդ ուզում
ես շարքից հանես... Ջահել չես, մի քիչ հետևիր քեզ, Թորգոմ ջան...

ԵՐԵՄԱՅԻ ՁԱՅՆ - Մամ, ջինսս որտե՞ղ է ... Հա, լավ, գտա, վայ, պայուսակս որտե՞ղ է, այ
մամ...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - *(Երևի հեռախոսով)* Մարգար ջան, լսո՞ւմ ես, Մարգար, մեքենային
ձեռք չտաք... Գործի չգցեք... Գիշերը նստեք, մի նոր բան եմ մտածել... Լսո՞ւմ ես... Գամ
խոսենք՝ նոր...

ՁԱՅՆ - *(ոտանավոր է սովորում)*

Տուր ինձ, օ տեր, ուրախություն անանձնական...

Տուր ինձ, օ տեր ուրախություն անանձնական...

ԱՐՄԵՆ - *(Լսում է)* Ահա, մի տողով, ընդամենը մի տողով ամեն ինչ ասված է: Ուրախություն
անանձնական... Ահա թե ինչն էր, որ լիուլի ուներ նա և ահա թե ինչն է մեզ
պակասում... *(Նստում է մի աթոռի, փակում աչքերը)*

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

*(Նույն տեսարանը: Արմենը նստած է փակ աչքերով, իսկ տանն արդեն իրարանցում է:
Հայտնվում են ծերունիներն ու պառավները, տիկին Շուշանիկն է հայտնվում իր
գերդաստանի հետ)*

2-ԲԴ ՊԱՌԱՎ - Բա ասում էին կին երեխաներ չունի...

1-ԻՆ ՊԱՌԱՎ - Չունի, էլի... Ես գիտեմ, թե չէ՝ տասնվեց տարի մի շենքում էինք ապրում...

2-ԲԴ ՊԱՌԱՎ - Էդ կինն ու տղաներն ովքե՞ր են, հարազատի լաց են տալիս: Կարո՞ղ է բաժանված էին ապրում կամ թե չէ քույրն է ...

1-ԻՆ ՊԱՌԱՎ - Ասում եմ նա ոչ մեկը չունի... Իսկ սա գալիս էր մեկ-մեկ... Ի՞նչ իմանաս ով է ...

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Մարդ պիտի բախտ ունենա... Մեկին էլ թաղում էին. չորս կին էր ունեցել... Մի տեսնեիր ոնց էին չորսն էլ գրկել իրար ու ձենները գլուխները գցել ... Ու ո՞նց էին մխիթարում իրար: Շուտ եկա կնոջս կողմը ու ասում եմ՝ հը, տեսնո՞ւմ ես, տիկին Պայծառ.. Ու իմ տիկին Պայծառն ի՞նչ ասի որ լավ լինի, ասում է՝ դու որ իսկի մի կնիկ էլ չես կարողանում պահել... *(ծիծաղում է)*

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Մի ծիծաղեք:

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Է, կարծում ես սա ծիծաղ է ... Ես էլ եմ հիվանդ... Վախից խոսում եմ, էլի...

(Արկղերով հանքային ջրեր են բերում)

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Յանի տեսնես գազ կա՞ մեջները... Խայտառակ բան ա, էլի... Տղես ստամոքսի ցավ ունի... ամեն օր ջերմուկ եմ առնում իրա համար, իսկ ինքը բացում ու թափում է ու հետն էլ խոսում է վրաս, կարծես թե ես եմ դրանց մեջ գազ լցնողը: Օրական հիսուն կոպեկ ջուրը տանում է:

2-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Ոչ մի բանի վրա վստահություն չկա... Ես էլ շաքար ունեմ, բայց լիմոնադ եմ սիրում ու շաքար ունեցողների հատուկ խանութից եմ առնում լիմոնադը: Շշի վրա գրված է «դիետիկ»: Ես էլ խմում եմ հանգիստ... Խմում եմ ու տեսնում, որ հա բարձրանում է շաքարս: Երեկ ի՞նչ իմանամ: Որ ուրիշ պիտակ չունեն, էդ դիետիկի պիտակներն են կպցնում սովորական լիմոնադին ու բաց թողնում: Բա սա կանխամտածված սպանություն չէ՞ :

3-ԲԴ ՊԱՌԱՎ - Ե՞րբ են վերցնելու:

4-ԲԴ ՊԱՌԱՎ - Դեռ հայտնի չէ. կուսակցական հանձնաժողովին են սպասում... Հանձնաժողովն է որոշելու...

3-ԲԴ ՊԱՌԱՎ - Խեղճ մարդ...

4-ԲԴ ՊԱՌԱՎ - Ինչի է խեղճ, այ կնիկ: Ապրել է, էլի...

3-ԲԴ ՊԱՌԱՎ - Չէ, դե որ որոշումով են թաղում, արդեն մեղք է էլի...

Ամեն ինչի համար որոշում... ամեն ինչի համար որոշում...

3-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Եկան...

*(Ներսէն մտնում սև թնկապերով երկու երիտասարդ, կանգնում դռան երկու կողմում:
Հայտնվում է Երվանդ Զանազանյանը: Խոժոռադեմ դիտում է մարդկանց)*

ԵՐՎԱՆԴ - Դուք ազատ եք:

(Ոչ ոք տեղից չի շարժվում)

Նախ՝ կափարիչի հարցը: Դազադի կափարիչը դնել իր տեղում:

(Երկու հոգի դուրս են գնում)

Սեդրակյան:

ՍԵՂՈՒՄՅԱՆ - Լսում եմ, շեֆ:

ԵՐՎԱՆԴ - Պիտներները...

ՍԵՂՈՒՄՅԱՆ - Ճիշտ ժամին կլինեն, շեֆ:

ԵՐՎԱՆԴ - Կաշիդ կքերթեմ, Ղարիբյան:

ՂԱՐԻԲՅԱՆ - Համակ ուշադրություն եմ:

ԵՐՎԱՆԴ - Միսը կբավականացնի՞ ... Օսետրինան...

ՂԱՐԻԲՅԱՆ - Ամեն ինչ կարգին է, շեֆ... *(Ականջին)* Չնեղանաք, բայց օսետրինան քիչ էր, որոշեցի մեջտեղ չհանել... ձեր տուն ուղարկեցի...

ԵՐՎԱՆԴ - Միայն մեր տո՞ւն... Ավագա՞կ... Կաշիդ կքերթեմ... Ասենք՝ օսետրինան երևի չսազեր էլ այս սեղանին... Թերևս դու իրավացի ես, Ղարիբյան:

ՂԱՐԻԲՅԱՆ - Պատրաստ եմ ծառայելու:

ԵՐՎԱՆԴ - Իսկ իմ խո՞սքը որտեղ է ... Ո՞վ էր մշակելու իմ խոսքը... Որտե՞ղ են իմ թեզիսները...

ՍԵՂՈՒՄՅԱՆ - Արմենի մոտ մնաց:

ԵՐՎԱՆԴ - Իսկ որտե՞ղ է Խոբենյանը: Գրողը տանի, որտե՞ղ է ասում եմ, Խոբենյանը:

ՍԵՂՈՒՄՅԱՆ - Պահ, հրեն քնած է, շեֆ...

ԵՐՎԱՆԴ - Ինչպե՞ս թե քնած է ... Արթնացրեք անմիջապես... Եվ ում ենք մենք վստահել... Ահա մեր պատասխանատու հերթապահը: Արա, դու գետինը չե՞ս մտնում:

(Արմենին արթնացնում են և նա հայտնվում է Ջանազանյանի առջև՝ մազախոշիվ, տրորված վերնաշապիկով, առանց սև թևկապի)

Որտե՞ղ է թևկապդ... Որտե՞ղ է իմ խոսքը, Խորենյան, կարդացե՞լ էս, ուղղե՞լ էս...

ԱՐՄԵՆ - Նա խնդրել է, որ իր թաղման ժամանակ խոսքեր չասվեն:

ԵՐՎԱՆԴ - Ո՞վ է խնդրել, այ տղա...

ԱՐՄԵՆ - Հանգուցյալը:

ԵՐՎԱՆԴ - Ո՞վ... Հանգուցյալը ո՞նց է խնդրել, Խորենյան, դու հո հարբած չես:

ՂԱՐԻՔՅԱՆ - Դու քո հացը կերար, Արմեն...

ԱՐՄԵՆ - Կտակ է թողել...

ԵՐՎԱՆԴ - Հետո՞... Մենք կտակն ո՞վ ենք ղեկավարվում, թե սահմանված կարգով: Այստեղ ո՞վ է որոշողը՝ նա՞ թե հանձնաժողովը:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Էստեղ մի խառը հաշիվ կա, ընկեր Ջանազանյան:

ԵՐՎԱՆԴ - Ի՞նչ խառը, ի՞նչ հաշիվ...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Իմ կարծիքով դուք նրան չեք թաղում, ում պետք է ...

ԵՐՎԱՆԴ - Քե՞զ ինչ պատահեց, այ մարդ: Բա ո՞ւմ պետք է թաղեինք:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Իմ կարծիքով էստեղ թյուրիմացություն կա: Եվ էս մարդը էն մարդը չի: Ասեմ՝ սա մեր վետերանների ցուցակում էր: Բայց ոչ ժողովների էր մասնակցում, ոչ ելույթներ էր ունենում, ոչ հուշեր էր պատմում, ոչ հանդիպումներ էր ունենում... աշխատավորության հետ...

ԵՐՎԱՆԴ - Դա շատ տարօրինակ է, բայց մեր գործը չէ. ինձ կարգադրել է անձամբ ինքը: Եվ ուզի, թե չուզի մենք նրան կթաղենք գոյություն ունեցող կարգի բոլոր համապատասխան կետերով: Ղարիբյան, որտե՞ղ է փողային նվագախումբը:

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Հա... բայց էս մի բան էլ եմ պարզել, ընկեր Ջանազանյան: Որ նա չի մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, էդ ո՞նց...

ԵՐՎԱՆԴ - Ո՞նց...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Այ, էս էլ չգիտեմ ոնց:

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Իսկ ես գիտեմ: Եվ քանի որ թույլտվություն ունեմ արդեն, կարող եմ հայտնել ճշմարտությունը: Նա միշտ էլ եղել է կրակի առաջին զծում և Հայրենական պատերազմի տարիներին, և այն ժամանակ, երբ նոր էր ճյուղավորվում ֆաշիզմը, և միջազգային ամենաբարդ իրադարձությունների ժամանակ, և ետպատերազմյան խաղաղ շինարարության շրջանում: Ճիշտ է, նա ոչ կոչումներ ունի և ոչ էլ կառավարական պարգևներ, բայց միայն այն պատճառով, որ չէր ցանկանում հավասարության գիծ դնել իր արածի և գնահատականի միջև: Նա միշտ իրեն պարտք է համարել մեր երկրին և արել է ամենադժվարինը, իբրև մարդ՝ ողջ կյանքում գիտակցաբար մնացել է ստվերում, հրաժարվել է աշխարհում մարդուն արտոնված բոլոր բարիքներից, սիրած կնոջից է հրաժարվել, ընտանեկան երջանկությունից ու խաղաղ ապրելուց է հրաժարվել, որպեսզի կարողանա մնալ միշտ գործող շարքային զինվոր և մեր երկրին զգուշացնել սպասվող վտանգներից: Նա ապրել է հայրենիքից հեռու, բայց միշտ մեզ հետ է եղել: Ահա թե ով էր Հայկ Մկրտչյանը:

1 -ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Սպասիր, իսկ դո՞ւ ով ես, է, ես քո անկետան էլ եմ տեսել: Մենք քո մասին էլ մի կարգին տեղեկություն չունենք:

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Կենսաթերթիկում ամեն ինչ չէ, որ գրվում է և դժբախտաբար այն չի գրվում, ինչ պետք է: Դե ուրեմն ավելացրեք իմ կենսաթերթիկում, որ ես հենց այն աշխատողն եմ եղել, որն ապահովել է Հայկ Մկրտչյանի կապը հայրենիքի հետ: Ես հիմա իրավունք ունեմ այդ ասելու:

ՇՈՒՇԱՆԻԿ - Վահրամ, թանկագին բարեկամ, հազար շնորհակալություն քեզ:

4-ԲԴ ԾԵՐՈՒՆԻ - Իսկ մնացածը՝ գերեզմանատանը: Ես ուզում եմ, որ նրանք, ովքեր գալու են Հայկ Մկրտչյանի ետևից, իսկապես իմանան, թե ով էր նա և ամեն մեկն իր կյանքով, բայց աշխատեն ապրել, ինչպես նա...

ԵՐՎԱՆԴ - Սպասեք, սպասեք, ձեզ ո՞վ է ձայն տալիս: Ձեր խոսքը պրոտոկոլով նախատեսված չէ: Գերեզմանատանը ես պետք է խոսեմ: Որտե՞ղ են իմ թեզիսները, գրողը տանի: Խորենյա՞ն...

(Խորենյանը կանգնած է՝ ճմրթված վերնաշապիկով: Խոռովքի մեջ է: Բարձրացնում է գլուխը և հանկարծ հենց իր դիմաց տեսնում է Ծովիկին ու իր տղաներին)

ԱՐՄԵՆ - Ընկեր Ջանազանյան, դուք իրավունք չունեք խոսելու:

ԵՐՎԱՆԴ - Ե՞ս...

ԱՐՄԵՆ - Դուք այն մարդը չեք, որ իրավունք ունենաք խոսել նրա մասին և քայլել նրա ետևից: Դուք կյանքում ամեն ինչ արել եք, ամեն միջոցի դիմել եք, որպեսզի միայն մարդկանց առջևից քայլեք, արմունկներով ճանապարհ եք բացել, վայր եք գցել, տրորել եք ձեր ընկերներին ու բարեկամներին, որպեսզի առաջինը լինեք: Վերևում լինեք: Իսկ նա, տեսնում եք, բոլորովին ուրիշ մարդ է եղել...

ԵՐՎԱՆԴ - Մա՞ ինչ բան է: Խելագարվեցիր, այ տղա:

ԱՐՄԵՆ - Նոր եմ խելքի գալիս և փառք ասածո, բոլորովին էլ ձեր տղան չեմ: Ձեր ամբողջ նպատակն է եղել ձեր կողքին, շրջապատում ձեզ նման մարդիկ ստեղծել, ձեզ նման մտածող ու ապրող մարդիկ, որովհետև կարգին մարդկանց մեջ դուք ապրել չէիք կարող:

ԵՐՎԱՆԴ - Փակեք սրա բերանը: Սեդրակյան, Ղարիբյան...

ԱՐՄԵՆ - Եվ Սեդրակյանն էլ իրավունք չունի քայլելու նրա ետևից և Ղարիբյանն էլ... և ես էլ, եթե չլինեիր այս գիշերը և եթե իմ տղաները հիմա այստեղ չլինեին... Եվ նա էլ իրավունք չունի, նա, ով անկետաներ է ուսումնասիրում և չի տեսնում մարդկանց... նա ով ծնել է ձեզ...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ - Ե՞ս... Ես իրավունք չունե՞մ: Ես վետերանների ակումբի...

ԵՐՎԱՆԴ - Սպասիր, դու ո՞վ ես, է, էդ ո՞վ է որոշել, թե ով իրավունք ունի, ով չէ:

ԱՐՄԵՆ - Հենց ինքը՝ Հայկ Մկրտչյանը: Ես ձեզ ասացի, որ նա կտակ է թողել:

ԵՐՎԱՆԴ - Եվ կտակի մեջ մեկ-մեկ գրված են մեր անունները:

ԱՐՄԵՆ - Մեն-մեկ... Աշխարհում ամեն ինչ տեսած մարդը այնուամենայնիվ ձեզանից զարմացած է հեռացել, որովհետև չի կարողացել հասկանալ, թե ինչո՞ւ դուք, որին մարդիկ բարձրացրել են, չեք սիրում նույն մարդկանց...

ԱԵԴՐԱԿՅԱՆ - Հացդ կերար, Արմեն...

ԱՐՄԵՆ - Թող լինի: Ես հրաժարվում եմ այն հացից, որ ինձ Զանազանյանն է խոստանում... Այդ հացից միայն կթունավորվեն իմ տղաները: Չեմ ուզում, չեմ ուզում:

ԵՐՎԱՆԴ - Բայց սա պրովոկացիա է, ցույց... չե՞ք տեսնում, նա ուզում է ձախողել մեր միջոցառումը: Ինչո՞ւ եք թողնում, որ նա խոսի... Սեդրակյան, կաշիդ... որտե՞ղ է փողային նվագախումբը...

ՁԱՅՆԵՐ

- Դե հերիք է, էլի, ինչու չեք թողնում մարդը խոսի...

- Ձեզ նոր չենք ճանաչում:

- Կարգին պահեք ձեզ, ժողովում չեք.

ԵՐՎԱՆԴ - Վայ...

(Ներսէս է մտնում Վաղոն ' դուրդուկահարների հետ)

ՎԱՂՈ - Դէ հիմա մի բան նվագեք, նվագեք, ձեր ցավը տանեմ... Ախր դուք չգիտեք ինչ մարդ էր իմ հարևանը... Մեծ մարդ էր, մեծ... Ամեն անգամ երբ տեսնում էր, ասում էր. «Բարի լույս, Վաղո, ինչպէս ես... բարի լույս, -ասում էր, -Վաղո...»

(Նվագախումբը հուզիչ մի նվագ է սկսում)

ԵՐՎԱՆԴ - Լավ, ես քեզ հետ հետո կխոսեմ, Խորենյան... եթէ խոսեմ: Գնանք, Սեդրակյան, Ղարիբյան, գնացինք, սա մեր տեղը չէ... Ես այդպէս էլ կզեկուցեմ, կասեմ, որ դա մեր տեղը չէր... Մենք այստեղ անելիք չունենք...

(Դուրս են գնում)

ԱՐՄԵՆ - Ահա միակ ճշմարիտ խոսքը, որ նա ասաց իր ողջ, եթէ կարելի է ասել գիտակցական կյանքում: *(Ձեռքով է անում իր տղաներին)* Հիմա ինձ հասկացա՞ր, Ծովիկ, Ծովիկ ջան... Ինձանից դու գոհ չե՞ս... Ո՞նց էք, իմ տղերք, գլուխներդ բարձր պահեք... Կարեն ջան, ապրես որ եկար... Հո շատ նեղացած չես ինձանից, Արշակ... Ճիշտ արեցի, որ ձայն տվեցի, չէ՞... Կեցցեք, որ հավաքվել էք, տղերք... Մենք պիտի տանենք նրան, մենք պիտի գնանք նրա ետևից, պիտի քայլենք մեր ճամփան՝ ինչպէս ինքն է ասել՝ չամբանալով, իրերին գերի չդառնալով, մանրութների ետևից չընկնելով, չաղքատանալով հոգով, այդպէս էր ասել, չէ՞, տիկին Շուշանիկ, չմոռանալով կարևորը, ամենակարևորը՝ թէ որտեղից ենք եկել, ուր ենք գնում և ինչ ենք թողնելու մեր զավակներին...

Այդպէս է ...

(Դուրդուկի նվագը խառնվում է սիմֆոնիկ երաժշտության հետ)

ՎԱՂՎԱԳՈՒՅՐ

Երևան – Դուրդուկի

20.06.86 թ.